



ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԿՈԼԵԳԻԱ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

6 սեպտեմբերի 2016 թվականի

թիվ 15

քաղ. Մոսկվա

**Գյուղատնտեսական արտադրանքի, պարենի, վուշի մանրաթելի, կաշվի
հումքի, բամբակի մանրաթելի եւ բրդի մասով Եվրասիական
տնտեսական միության անդամ պետությունների պահանջարկի եւ
առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռների հաշվարկման
մեթոդաբանության մասին**

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 5-րդ, 18-րդ եւ 95-րդ հոդվածներին, Եվրասիական միջկառավարական խորհրդի 2015 թվականի մայիսի 29-ի թիվ 3 որոշմամբ հաստատված՝ 2015-2016 թվականների համար Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների թեթեւ արդյունաբերության զարգացմանն ուղղված միջոցառումների պլանի 12-րդ կետին համապատասխան եւ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) գյուղատնտեսական արտադրանքի, պարենի եւ թեթեւ

արդյունաբերության համար հումքի շուկաներում պահանջարկի եւ առաջարկի կանխատեսման նկատմամբ միասնական մոտեցումների մշակման.

անդամ պետությունների տնտեսությունների ագրարային հատվածի վիճակի գնահատման եւ զարգացման գերակայությունների սահմանման.

անդամ պետությունների պարենային անվտանգության ապահովման, թեթեւ արդյունաբերության զարգացման եւ արտահանման ներուժի բարձրացման ոլորտում պետական քաղաքականության միջոցառումների մշակման եւ իրականացման նպատակով՝

հանձնարարում է անդամ պետություններին՝ «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում՝ Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում, սույն հանձնարարականի հրապարակման օրվանից՝ գյուղատնտեսական արտադրանքի, պարենի, վուշի մանրաթելի, կաշվի հումքի, բամբակի մանրաթելի եւ բրդի մասով անդամ պետությունների պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսումային հաշվեկշիռների հետագա հաշվարկում հաշվի առնվող՝ գյուղատնտեսական արտադրանքի, պարենի, վուշի մանրաթելի, կաշվի հումքի, բամբակի մանրաթելի եւ բրդի մասով անդամ պետությունների պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռները հաշվարկելիս՝

1. Առաջնորդվել Գյուղատնտեսական արտադրանքի, պարենի, վուշի մանրաթելի, կաշվի հումքի, բամբակի մանրաթելի եւ բրդի մասով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռների հաշվարկման մեթոդաբանությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Չկիրառել «Գյուղատնտեսական արտադրանքի, հումքի եւ պարենի առանձին տեսակների մասով Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումների մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հունվարի 29-ի թիվ 1 հանձնարարականը եւ «Գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի հիմնական տեսակների մասով

Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների պահանջարկի եւ առաջարկի համատեղ կանխատեսումների հաշվարկման մեթոդաբանության մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 22 հանձնարարականը:

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի նախագահ՝

S. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի սեպտեմբերի 6-ի
թիվ 15 հանձնարարականի

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**գյուղատնտեսական արտադրանքի, պարենի, վուշի մանրաթելի, կաշվի
հումքի, բամբակի մանրաթելի եւ բրդի մասով Եվրասիական
տնտեսական միության անդամ պետությունների պահանջարկի եւ
առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռների հաշվարկման**

I. Ընդհանուր դրույթներ

Գյուղատնտեսական արտադրանքի, պարենի, վուշի մանրաթելի, կաշվի
հումքի, բամբակի մանրաթելի եւ բրդի մասով Եվրասիական տնտեսական
միության անդամ պետությունների պահանջարկի եւ առաջարկի
կանխատեսումային հաշվեկշիռները (այսուհետ՝ պահանջարկի եւ առաջարկի
կանխատեսումային հաշվեկշիռներ) հաշվարկվում են հետևյալ ապրանքային
խմբերի մասով՝

հացահատիկ.

միս եւ մսամթերք.

տավարի միս.

խոզի միս.

ոչխարի միս.

թռչնամիս.

կաթ եւ կաթնամթերք.

շաքար.

բուսական յուղեր.

կարտոֆիլ եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանք.

ձու եւ ձվամթերք.

բանջարաբուստանային մշակաբույսեր եւ դրանց վերամշակումից ստացվող արտադրանք.

մրգեր եւ հատապտուղներ, ինչպես նաեւ դրանց վերամշակումից ստացվող արտադրանք.

վուշի մանրաթել.

կաշվի հումք եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանք.

բամբակի մանրաթել եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանք.

բուրդ եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանք:

Պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումն իրականացվում է ըստ գյուղատնտեսական արտադրանքի, պարենի եւ թեթեւ արդյունաբերության համար հումքի հիմնական տեսակների (վուշի մանրաթելի, կաշվի հումքի, բամբակի մանրաթելի, բրդի) ռեսուրսների ստացման աղբյուրների ու ըստ դրանց օգտագործման ուղղությունների՝ հաշվեկշռված կանխատեսումային ցուցանիշների համակարգ ներառող հաշվեկշռային մեթոդի կիրառմամբ, ընդ որում՝ ռեսուրսային մասը (ռեսուրսները) հավասար է բաշխման մասի (ռեսուրսների օգտագործման) եւ տարվա վերջին պաշարների գումարին:

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները (այսուհետ՝ անդամ պետություններ) հաշվարկում եւ մինչեւ ընթացիկ տարվա նոյեմբերի 20-ը Եվրասիական տնտեսական հանձնաժողով են ուղարկում պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռները եւ լրացուցիչ տեղեկություններ՝ թիվ 1 հավելվածի համաձայն՝ ձեւերին համապատասխան:

Պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռը ներառում է հետևյալ դիրքերը՝

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվութուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
1. Պաշարներ՝ տարվա սկզբին				
2. Արտադրություն				
3. Ներսւբերում՝ ընդամենը այդ թվում՝ փոխադարձ առևտուր՝ ընդամենը այդ թվում՝ անդամ պետություններից՝ _____ _____ ... արտաքին առևտուր (ներմուծում)				
4. Ընդամենը ռեսուրսներ				
5. Ներքին օգտագործում՝ ընդամենը				
6. Դուրսբերում՝ ընդամենը այդ թվում՝ փոխադարձ առևտուր՝ ընդամենը այդ թվում՝ անդամ պետություններ՝ _____ _____ ... արտաքին առևտուր (արտահանում)				
7. Ընդամենը օգտագործում				
8. Պաշարներ՝ տարվա վերջում				

Պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռները հաշվարկվում են բնական չափման միավորներով (հազ. տոննա, ձվի եւ ձվամթերքի համար՝ մլն հատ, կաշվի հումքի համար՝ հազ. հատ):

Պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռների ձևերը ներառում են հաշվետու տարվա, ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային (ընթացիկ տարվան հաջորդող) օրացուցային տարիների տվյալները:

Հաշվետու տարվա համար տվյալներն ըստ խոշորացված ապրանքային խմբերի հաշվարկվում են անդամ պետությունների պետական վիճակագրական մարմինների (ծառայությունների) կողմից հաստատվող մեթոդիկաներին համապատասխան՝ բացառությամբ «Ներսերում» եւ «Դուրսերում» ցուցանիշների (3-րդ եւ 6-րդ դիրքեր):

Ըստ մսի առանձին տեսակների (տավարի միս, խոզի միս, ոչխարի միս, թռչնամիս) մանրամասնելիս օգտագործվում են անդամ պետությունների պետական վիճակագրական դիտարկումների արդյունքներով ստացված տվյալները, մաքսային վիճակագրության տվյալները, ինչպես նաեւ այլ աղբյուրներից տվյալները եւ փորձագիտական գնահատականները: Անդամ պետությունների փոխադարձ եւ արտաքին առևտրի ծավալները ձեւավորվում են անդամ պետությունների լիազորված մարմիններից սահմանված կարգով Եվրասիական տնտեսական հանձնաժողովում ստացվող վիճակագրական տվյալներին համապատասխան:

Ընթացիկ եւ կանխատեսումային տարիների համար պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռները հաշվարկվում են հաշվարկային եւ փորձագիտական մեթոդների կիրառմամբ: Որպես պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռների հաշվարկման համար հիմք հանձնարարվում է օգտագործել անդամ պետությունների գյուղատնտեսության զարգացման պետական ծրագրերի ցուցանիշները, անդամ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսումները եւ համաշխարհային ագրոարդյունաբերական շուկայի զարգացման կանխատեսումները:

Կանխատեսման ժամանակ օգտագործվում են հետեւյալ հաշվարկային մեթոդները՝

Ֆակտորային վերլուծություն.

տվյալների շարքերի էքստրապոլյացիա.

ռեգրեսիոն վերլուծություն.

տնտեսամաթեմատիկական մոդելավորում:

Գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը եւ գյուղատնտեսությունում արտադրական սպառումը կանխատեսվում են ըստ առանձին գործոնների (գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածություններ եւ բերքատվություն, գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակ եւ դրանց մթերատվությունը եւ այլն):

Կանխատեսման նպատակով թույլատրվում է էքստրապոլյացիայի մեթոդների կիրառումը, որոնցով նախատեսվում են նախորդ տարիների ցուցանիշների դինամիկայում միտումների բացահայտումը եւ այդ միտումների տեղափոխումը կանխատեսումային ժամանակահատված՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

Անդամ պետությունների բնակչության կողմից սննդամթերքի սպառման ցուցանիշները կանխատեսվում են այնպիսի մեթոդների եւ մոդելների կիրառմամբ, որոնցով որոշվում է անդամ պետության բնակչության կողմից սննդամթերքի՝ մեկ շնչի հաշվով սպառման կախվածությունը անդամ պետության բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտներից՝ համաձայն թիվ 3 հավելվածի:

«Ներսւբերում» եւ «Դուրսւբերում» ցուցանիշները (3-րդ եւ 6-րդ դիրքեր) հաշվարկվում են ըստ համապատասխան գործակիցների՝ համաձայն թիվ 4 հավելվածի:

Ցուցանիշների՝ հաշվարկային մեթոդներով ստացված կանխատեսումային արժեքները ճշգրտվում են փորձագիտական մեթոդների օգնությամբ՝ հաշվի առնելով այն հիմնական գործոնները, որոնք կարող են ազդել ցուցանիշների դինամիկայում ձեւավորված միտումների վրա:

II. Հացահատիկի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռը

Հացահատիկի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռն արտացոլում է կանխատեսվող ռեսուրսները՝ ըստ ստացման աղբյուրների եւ դրանց օգտագործման ուղղությունների՝ առանց հացահատիկի վերամշակումից

ստացվող արտադրանքի (Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի (այսուհետ՝ ԵՍՏՄ ԱՏԳ ԱԱ) 1001 - 1008 ծածկագրեր):

Հաշվետու տարվա համար ըստ խոշորացված ապրանքային խմբերի տվյալները հաշվարկվում են անդամ պետությունների պետական վիճակագրական մարմինների (ծառայությունների) կողմից հաստատվող մեթոդիկաներին համապատասխան՝ Բացառությամբ «Ներսերում» եւ «Դուրսերում» ցուցանիշների (3-րդ եւ 6-րդ դիրքեր): Տվյալ ցուցանիշները հաշվարկվում են ըստ համապատասխան գործակիցների՝ համաձայն թիվ 4 հավելվածի:

Հացահատիկի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի ռեսուրսային մասը (ռեսուրսները) ներառում է հետևյալ դիրքերը՝

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվո- թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե- սում)	տարի (կանխատե- սում)
---------------------	------------------------------	-------------------	----------------------------	----------------------------

1. Պաշարներ՝ տարվա սկզբին

1-ին դիրքը ներառում է գյուղատնտեսական արտադրողների (գյուղատնտեսական կազմակերպություններում, գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում եւ բնակչության տնտեսություններում), արտադրող ձեռնարկություններում, հացընդունման եւ այլ կազմակերպություններում հացահատիկի պաշարների մասով տվյալները:

Տարվա սկզբին հացահատիկի պաշարների մասով տվյալները տեղափոխվում են 8-րդ դիրքից (համապատասխան նախորդ տարվա սյունակից):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվո- թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե- սում)	տարի (կանխատե- սում)
---------------------	------------------------------	-------------------	----------------------------	----------------------------

2. Արտադրություն

Հացահատիկի արտադրության ծավալում (2-րդ դիրք) ներառվում է հացահատիկային եւ հատիկաընդունային մշակաբույսերի (ներառյալ հատիկի համար եզիպտացորենը) համախառն բերքը բոլոր կատեգորիաների տնտեսություններում՝

գյուղատնտեսական կազմակերպություններում.

գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում.

բնակչության տնտեսություններում:

Հացահատիկի համախառն բերքը հաշվի է առնվում վերջնամշակումից հետո ստացվող քաշով:

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար հացահատիկային եւ հատիկաընդեղենային մշակաբույսերի համախառն բերքի ցուցանիշները որոշվում են անդամ պետությունների՝ գյուղատնտեսության զարգացման պետական ծրագրերի եւ բուսաբուծության զարգացման ոլորտային ծրագրերի հետ փոխկապակցված՝ անդամ պետությունների լիազորված մարմինների գերատեսչական կանխատեսումներին (այսուհետ՝ գերատեսչական կանխատեսումներ) համապատասխան: Գերատեսչական կանխատեսումները կարող են՝

պարունակել ցուցանիշներ առանձին աշնանացան հացահատիկային, գարնանացան հացահատիկային եւ հատիկաընդեղենային մշակաբույսերի մասով.

ներառել կանխատեսումային տվյալներ ցանքատարածությունների վերաբերյալ (ցանքատարածությունների կազմից հանվում են կանաչ կերի եւ սիլոսի համար նախատեսված հացահատիկային եւ հատիկաընդեղենային մշակաբույսերի տարածությունները), տվյալներ բերքատվության (հացահատիկային եւ հատիկաընդեղենային մշակաբույսերի բերքատվությունը դիտարկվում է ցանքատարածության մեկ հեկտարի հաշվարկով՝ վերջնամշակումից հետո հացահատիկի քաշով) եւ հացահատիկային եւ հատիկաընդեղենային մշակաբույսերի համախառն բերքի վերաբերյալ.

որոշել հացահատիկային եւ հատիկաընդեղենային մշակաբույսերի կանխատեսվող համախառն բերքը (Ս₃) հետևյալ բանաձևով՝

$$P_3 = P^{03}_3 \times Y^{03}_{3+} + P^{AP}_3 \times Y^{AP}_3,$$

որտեղ՝

P^{03} -ն աշնանացան հացահատիկային եւ հատիկաընդդեմային մշակաբույսերի պլանավորվող ցանքատարածությունն է.

P^{ap3} -ն՝ գարնանացան հացահատիկային եւ հատիկաընդդեմային մշակաբույսերի պլանավորվող ցանքատարածությունը.

Y^{03} -ն՝ աշնանացան հացահատիկային եւ հատիկաընդդեմային մշակաբույսերի կանխատեսվող բերքատվությունը.

Y^{ap3} -ն՝ գարնանացան հացահատիկային եւ հատիկաընդդեմային մշակաբույսերի կանխատեսվող բերքատվությունը:

Հացահատիկային եւ հատիկաընդդեմային մշակաբույսերի ցանքատարածությունների կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

գյուղատնտեսական մշակաբույսերի պլանավորվող ցանքաշրջանառությունը.

հողատեսքերի ենթադրվող վերափոխումը, այդ թվում՝ խամահողերի հերկման հաշվին.

դիտարկվող ժամանակահատվածում իրականացվող՝ հացահատիկային եւ հատիկաընդդեմային մշակաբույսերի արտադրության զարգացման մասով խոշոր ներդրումային ծրագրերը.

հացահատիկի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան:

Համապատասխան գերատեսչական կանխատեսումների բացակայության դեպքում հացահատիկային եւ հատիկաընդդեմային մշակաբույսերի բերքատվության ցուցանիշները կանխատեսվում են նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների օգնությամբ: Հացահատիկային եւ հատիկաընդդեմային մշակաբույսերի բերքատվության կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

պարարտանյութերի կիրառման պլանավորվող մակարդակը.

հացահատիկային եւ հատիկաընդեղենային մշակաբույսերի սերմերի որակը.

բուսաբուծության արտադրանքի աճեցման ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրումը:

Կանխատեսումային գնահատումների ճշգրտությունը բարձրացնելու նպատակով հացահատիկային եւ հատիկաընդեղենային մշակաբույսերի համախառն բերքի հաշվարկը կարող է կատարվել առանձին՝ ըստ տնտեսության յուրաքանչյուր կատեգորիայի (հետագա գումարմամբ)՝ գյուղատնտեսական կազմակերպություններում, գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում եւ բնակչության տնտեսություններում:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

3. Ներսերում՝ ընդամենը
 այդ թվում՝
 փոխադարձ առեստուր՝ ընդամենը
 այդ թվում՝ անդամ պետություններից՝

 ...
 արտաքին առեստուր (ներմուծում)

3-րդ դիրքն արտացոլում է հացահատիկի ներսերման ընդհանուր ծավալը, այդ թվում՝ անդամ պետություններից (փոխադարձ առեստուր), եւ հացահատիկի ներմուծման մատակարարումները երրորդ երկրներից (արտաքին առեստուր):

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար հացահատիկի ներսերման ցուցանիշները (OB₃) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$OB_3 = \sum_k B_{3k} + I_3,$$

որտեղ՝

B_{3k}-ն k անդամ պետությունից հացահատիկի ներսերման կանխատեսումն է.

И₃-ն՝ հացահատիկի ներմուծումը (արտաքին առևտուր):

Անդամ պետություններից հացահատիկի ներսերման եւ հացահատիկի ներմուծման մատակարարումների կանխատեսումները կարող են որոշվել նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների կիրառմամբ: Տվյալ կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

անդամ պետության՝ հացահատիկի կանխատեսվող պահանջումները.

հացահատիկի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան՝ ներառյալ ազգային շուկայում եւ հացահատիկի հիմնական մատակարար պետություններում հացահատիկի գների հարաբերակցությունը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

4. Ընդամենը ռեսուրսներ

Հացահատիկի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի ռեսուրսային մասով (ռեսուրսների մասով) հանրագումարը (Pec₃) որոշվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Pec_3 = 3H_3 + \Pi_3 + B_3 + I_3,$$

որտեղ՝

3H₃-ն հացահատիկի պաշարներն են տարվա սկզբին.

Π₃-ն՝ հացահատիկի արտադրությունը.

B₃-ն՝ անդամ պետություններից հացահատիկի ներսերումը.

И₃-ն՝ հացահատիկի ներմուծումը (արտաքին առևտուր):

Հացահատիկի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի բաշխիչ մասը (ռեսուրսների օգտագործումը) ներառում է հետեւյալ դիրքերը՝

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
այդ թվում՝
արտադրական սպառում՝ ընդամենը
այդ թվում՝
սերմերի համար

5-րդ դիրքը ներառում է արտադրական սպառման, պարենային նպատակով վերամշակման համար հացահատիկի ծախսման մասով տվյալները, կորուստների եւ անձնական սպառման մասով տվյալները:

5-րդ դիրքի «սերմերի համար» ստորաենթադիրքն արտացոլում է բոլոր կատեգորիաների տնտեսություններում գյուղատնտեսական արտադրողների մոտ սերմերի համար հացահատիկի ծախսման մասով տվյալները: Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար տվյալ ստորաենթադիրքի ցուցանիշները որոշվում են այն գերատեսչական կանխատեսումներին համապատասխան, որոնք հաշվարկվում են որպես հացահատիկային եւ հատիկաընդդեմային մշակաբույսերի (հաշվի են առնվում դիտարկվող տարվա բերքի գարնանացան մշակաբույսերի ցանքատարածությունները եւ հաջորդ տարվա բերքի համար աշնանացան մշակաբույսերի ցանքատարածությունները), ինչպես նաեւ այն կերային մշակաբույսերի ցանքատարածությունների արտադրյալ, որոնց ցանքի համար օգտագործվում են հացահատիկային եւ հատիկաընդդեմային մշակաբույսերի սերմերը (եգիպտացորեն՝ սիլոսի համար, աշնանացաններ՝ կանաչ կերի համար, հացահատիկաընդդեմային միամյա խառնուրդներ), հացահատիկային, հատիկաընդդեմային եւ կերային մշակաբույսերի ցանքի համապատասխան նորմերի համար:

Համապատասխան գերատեսչական կանխատեսումների բացակայության դեպքում ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար սերմերի համար հացահատիկի ծախսման ցուցանիշները որոշվում են հետևյալ հաշվարկային եւ փորձագիտական մեթոդների օգնությամբ՝

սերմերի համար հացահատիկի ծախսումը (C₃) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$C_3 = P_3 \times q,$$

որտեղ՝

P₃-ն հացահատիկային եւ հատիկարնդեղենային մշակաբույսերի, ինչպես նաեւ կերային մշակաբույսերի ցանքատարածություններն են, որոնց ցանքի համար օգտագործվում են հացահատիկային եւ հատիկարնդեղենային մշակաբույսերի սերմերը.

q-ն՝ սերմերի ցանքի միջին նորման, որը սահմանվում է որպես սերմի վրա ծախսված հացահատիկի՝ հացահատիկային, հատիկարնդեղենային եւ կերային մշակաբույսերի ցանքատարածությունների նկատմամբ հարաբերության վերջին 3 տարվա համար միջին արժեք:

Հացահատիկային, հատիկարնդեղենային եւ կերային մշակաբույսերի ցանքատարածությունները կանխատեսվում են՝ հաշվի առնելով հացահատիկի արտադրության ծավալների կանխատեսման ժամանակ հաշվի առնվող գործոնները:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը

այդ թվում՝

արտադրական սպառում՝ ընդամենը

այդ թվում՝

անասնակերի եւ թռչնակերի համար

5-րդ դիրքի «անասնակերի եւ թռչնակերի համար» ստորաենթադիրքն արտացոլում է բոլոր կատեգորիաների տնտեսություններում գյուղատնտեսական արտադրողների մոտ անասնակերի եւ թռչնակերի համար հացահատիկի ծախսման մասով տվյալները: Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային

տարիների համար տվյալ ստորաենթադիրքի մասով ցուցանիշները որոշվում են գերատեսչական կանխատեսումներին համապատասխան: Գերատեսչական կանխատեսումները կարող են՝

ներառել կենդանիների եւ թռչունների գլխաքանակի (տարվա սկզբին), կերերի ծախսման նորմերի (կերային միավորներով), կերաբաժինների կառուցվածքի եւ կերերի սննդարար արժեքի գործակիցների մասին կանխատեսումային տվյալները.

որոշել անասնակերի եւ թռչնակերի համար հացահատիկի կանխատեսումային ծախսումը (K_3) հետեւյալ բանաձեւով՝

$$K_3 = \sum_j M_j \times s_j \times u_{3j} \times g_3,$$

որտեղ՝

M_j -ն j տեսակի կենդանիների եւ թռչունների գլխաքանակի կանխատեսումն է (տարվա սկզբին).

s_j -ն՝ j տեսակի անասունների եւ թռչունների համար կերերի ծախսման նորմաները.

u_{3j} -ն՝ j տեսակի անասունների եւ թռչունների համար կերաբաժինների կառուցվածքում հացահատիկի մասնաբաժինը.

g_3 -ն՝ հացահատիկի սննդարար արժեքի գործակիցը:

Համապատասխան գերատեսչական կանխատեսումների բացակայության դեպքում անասնակերի եւ թռչնակերի (K_3)՝ ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար հացահատիկի ծախսման ցուցանիշները որոշվում են հետեւյալ բանաձեւով՝

$$K_3 = M_y \times s,$$

որտեղ՝

M_y -ն բոլոր տեսակի անասունների եւ թռչունների պայմանական գլխաքանակն է.

s-ն՝ մեկ պայմանական գլխի համար հացահատիկի ծախսման միջին նորման, որը սահմանվում է որպես անասնակերի եւ թռչնակերի համար ծախսված հացահատիկի՝ պայմանական գլխաքանակի նկատմամբ հարաբերության վերջին 3 տարվա համար միջին արժեք:

Անասունների եւ թռչունների գլխաքանակը կանխատեսվում է՝ հաշվի առնելով այն գործոնները, որոնք որոշվելու են մսի արտադրության ծավալների կանխատեսումները դիտարկելիս:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
 այդ թվում՝
 արտադրական սպառում՝ ընդամենը
 այդ թվում՝
 կերային նպատակներով վերամշակում

5-րդ դիրքի «կերային նպատակներով վերամշակում» ստորաենթադիրքը ներառում է համակցված կերերի արտադրման համար համակցված կերի արդյունաբերության ձեռնարկությունների եւ գյուղատնտեսական արտադրողների կողմից վերամշակվող հացահատիկի ծավալները:

Համակցված կերի համար հացահատիկի վերամշակման ծավալների կանխատեսումը կատարվում է նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների կիրառմամբ: Տվյալ կանխատեսումային ցուցանիշները հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

անասնաբուծության զարգացման համար համակցված կերի պահանջմունքները.

համակցված կերերի արտադրության համար հզորությունների առկայությունը.

դիտարկվող ժամանակահատվածում համակցված կերի արդյունաբերության նոր ձեռնարկությունների ստեղծման եւ գործող ձեռնարկությունների զարգացման մասով ներդրումային ծրագրերը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվո- թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե- սում)	տարի (կանխատե- սում)
---------------------	------------------------------	-------------------	----------------------------	----------------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
այդ թվում՝
արտադրական սպառում՝ ընդամենը
այդ թվում՝
այլ նպատակներով վերամշակում

5րդ դիրքի «այլ նպատակներով վերամշակում» ստորաենթադիրքն արտացոլում է սպիրտի, գարեջրի, օսլայի եւ այլ արտադրանքի արտադրության համար արտադրող ձեռնարկությունների կողմից վերամշակվող հացահատիկի մասով տվյալները:

Այլ նպատակներով հացահատիկի վերամշակման ծավալների կանխատեսումը կատարվում է նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների օգնությամբ: Տվյալ կանխատեսումային ցուցանիշները հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

վերամշակող ձեռնարկությունների հզորությունների առկայությունը եւ ծանրաբեռնվածությունը.

դիտարկվող ժամանակահատվածում նոր վերամշակող ձեռնարկությունների ստեղծման եւ գործող վերամշակող ձեռնարկությունների զարգացման մասով ներդրումային ծրագրերը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվո- թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե- սում)	տարի (կանխատե- սում)
---------------------	------------------------------	-------------------	----------------------------	----------------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
այդ թվում՝
պարենային նպատակներով վերամշակում

5-րդ դիրքի «պարենային նպատակներով վերամշակում» ենթադիրքում հաշվի են առնվում այլուրի եւ ձավարի արտադրության համար գյուղատնտեսական արտադրողների, արտադրող ձեռնարկությունների, հացընդունման եւ այլ կազմակերպությունների կողմից վերամշակվող հացահատիկի ծավալները:

Այլուրի եւ ձավարի համար հացահատիկի վերամշակման ծավալների կանխատեսումը կատարվում է նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների օգնությամբ: Տվյալ կանխատեսումային ցուցանիշները հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

այրադաց ձեռնարկությունների հզորությունների առկայությունը եւ ծանրաբեռնվածությունը.

դիտարկվող ժամանակահատվածում նոր այրադաց ձեռնարկությունների ստեղծման եւ գործող այրադաց ձեռնարկությունների զարգացման մասով ներդրումային ծրագրերը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
այդ թվում՝
կորուստներ

5-րդ դիրքի «կորուստներ» ենթադիրքը ներառում է արտադրությունից մինչեւ իրացում բոլոր փուլերում հացահատիկի կորուստների մասով տվյալները (գյուղատնտեսական արտադրողների, հացընդունման կազմակերպությունների, արտադրող ձեռնարկությունների, մեծածախ առևտրի կազմակերպությունների եւ այլ կազմակերպությունների կորուստների մասով):

Կորուստների կանխատեսումը հաշվարկվում է՝ հաշվի առնելով վերջին 3 տարվա ռեսուրսներում դրանց միջին տեսակարար կշիռը եւ հացահատիկի կորուստների կրճատմանն ուղղված՝ անդամ պետությունների պլանավորվող միջոցառումները:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
այդ թվում՝
անձնական սպառում

Անձնական սպառման ֆոնդի կազմում (5-րդ դիրքի «անձնական սպառում» ենթադիրք) ներառվում են այն հացահատիկի մասով տվյալները, որը տնային տնտեսություններում ստացվում է հում տեսքով, եւ չեն ներառում վերամշակված տեսքով սպառվող հացահատիկի մասով տվյալները:

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար հացահատիկի անձնական սպառման ցուցանիշները կարող են սահմանվել որպես վերջին 3 տարվա համար միջին արժեք:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

6. Դուրսբերում՝ ընդամենը
այդ թվում՝
փոխադարձ առևտուր՝ ընդամենը
այդ թվում՝ անդամ պետություններ՝

...
արտաքին առևտուր (արտահանում)

6-րդ դիրքն արտացոլում է հացահատիկի դուրսբերման ընդհանուր ծավալը, այդ թվում՝ անդամ պետություններ (փոխադարձ առևտուր), եւ հացահատիկի՝ երրորդ երկրներ արտահանման մատակարարումները (արտաքին առևտուր):

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար հացահատիկի դուրսբերման ցուցանիշները (OBB₃) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$OBB_3 = \sum_k BB_{3k} + \Xi_3,$$

որտեղ՝

BB_{3k} -ն k անդամ պետություն հացահատիկի դուրսբերման կանխատեսումն է.

Ξ_3 -ն՝ հացահատիկի արտահանումը (արտաքին առևտուր):

Անդամ պետություններ հացահատիկի դուրսբերման եւ հացահատիկի արտահանման մատակարարումների կանխատեսումները կարող են որոշվել նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների կիրառմամբ: Տվյալ կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

հացահատիկի կանխատեսվող ռեսուրսները եւ դրանց ներքին օգտագործումը.

հացահատիկի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան՝ ներառյալ ազգային շուկայում եւ հացահատիկ սպառող հիմնական պետություններում հացահատիկի գների հարաբերակցությունը.

հացահատիկի արտահանմանը վերաբերող՝ անդամ պետությունների օրենսդրության ենթադրվող փոփոխությունները (մաքսատուրքերի չափերի փոփոխություններ, էմբարգոյի սահմանում եւ այլ փոփոխություններ):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

7. Ընդամենը օգտագործում

Հացահատիկի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի բաշխիչ մասով (ռեսուրսների օգտագործման մասով) հանրագումարը ($ИСП_3$) որոշվում է հետեւյալ բանաձեւով՝

$$ИСП_3 = C_3 + K_3 + ПК_3 + ПД_3 + ПП_3 + ПО_3 + ЛП_3 + BB_3 + \Xi_3,$$

որտեղ՝

C_3 -ն սերմերի համար հացահատիկի արտադրական սպառումն է.

К3-ն՝ անասնակերի եւ թռչնակերի համար հացահատիկի արտադրական սպառումը.

ՍԿ3-ն՝ կերային նպատակներով հացահատիկի վերամշակումը.

ՍԴ3-ն՝ այլ նպատակներով հացահատիկի վերամշակումը.

ՍՍ3-ն՝ պարենային նպատակով հացահատիկի վերամշակումը.

ՍՕ3-ն՝ հացահատիկի կորուստները.

ՍՍ3-ն՝ հացահատիկի անձնական սպառումը.

ՅԵ3-ն՝ անդամ պետություններ հացահատիկի դուրսբերումը.

Ծ3-ն՝ հացահատիկի արտահանումը (արտաքին առևտուր):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

8. Պաշարներ՝ տարվա վերջում

8-րդ դիրքը ներառում է գյուղատնտեսական արտադրողների, հացընդունման եւ այլ կազմակերպությունների հացահատիկի պաշարների մասով տվյալները:

Տարվա վերջում հացահատիկի պաշարների կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում հետեւյալ գործոնները՝

հացահատիկի կանխատեսվող ռեսուրսները եւ դրանց ներքին օգտագործումը.

մինչեւ հաջորդ տարվա բերքը հացահատիկի պահանջմունքի բավարարման համար հացահատիկի անհրաժեշտ պաշարների ձեւավորումը.

հացահատիկի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան՝ ներառյալ ազգային շուկայում եւ հացահատիկ սպառող հիմնական պետություններում հացահատիկի գների հարաբերակցությունը:

Էլեւատոր-պահեստային տնտեսության առկայության եւ զարգացման մասին տվյալները:

III. Մսի եւ մսամթերքի, ինչպէս նաեւ մսի առանձին տեսակների
(տավարի մսի, խոզի մսի, ոչխարի մսի, թռչնամսի) պահանջարկի եւ
առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռները

Մսի ու մսամթերքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռում ներառվում են բոլոր տեսակների կենդանիների միսը (տավարի միս, խոզի միս, ոչխարի միս, այծի միս, ճագարի միս, թռչնամիս եւ այլն), ըստ սույն մեթոդաբանության թիվ 4 հավելվածում նշված համապատասխան գործակիցների՝ մսի վերահաշվարկով մսամթերքը, 1-ին եւ 2-րդ կատեգորիաների ենթամթերքը, ինչպէս նաեւ հում ճարպի վերահաշվարկով կենդանական սննդային ճարպերը (ԵՍՏՄ ԱՏԳ ԱԱ 0201- 0210, 1601 00 - 1602 ծածկագրեր):

Պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռները հաշվարկվում են ըստ մսի տեսակների՝

տավարի մսի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռ.

խոզի մսի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռ.

ոչխարի մսի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռ.

թռչնամսի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռ:

Ըստ մսի տեսակների՝ պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռում չեն ներառվում մսի վերամշակումից ստացվող արտադրանքի մասով տվյալները:

Հաշվետու տարվա համար տվյալները հաշվարկվում են անդամ պետությունների պետական վիճակագրական մարմինների (ծառայությունների) կողմից հաստատվող մեթոդիկաներին համապատասխան՝ բացառությամբ «Ներսերում» եւ «Դուրսերում» ցուցանիշների (3-րդ եւ 6-րդ դիրքեր): Տվյալ ցուցանիշները հաշվարկվում են ըստ սույն մեթոդաբանության թիվ 4 հավելվածում նշված համապատասխան գործակիցների:

Մսի եւ մսամթերքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռի ռեսուրսային մասը (ռեսուրսները) ներառում է հետեւյալ դիրքերը՝

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

1. Պաշարներ՝ տարվա սկզբին

1-ին դիրքը ներառում է գյուղատնտեսական արտադրողների (գյուղատնտեսական կազմակերպությունների, գյուղացիական (ֆերմերային) տնտեսությունների եւ բնակչության տնտեսությունների), արտադրող ձեռնարկությունների, մեծածախ եւ մանրածախ առևտրի կազմակերպությունների մսի եւ մսամթերքի պաշարների մասով տվյալները:

Տարվա սկզբին մսի եւ մսամթերքի պաշարների մասով տվյալները տեղափոխվում են 8-րդ դիրքից (համապատասխան նախորդ տարվա սյունակից):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

2. Արտադրություն

Մսի արտադրության ծավալում (2-րդ դիրք) ներառվում է մսի արտադրությունը բոլոր կատեգորիաների տնտեսություններում՝

գյուղատնտեսական կազմակերպություններում.

գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում.

բնակչության տնտեսություններում:

Մսի արտադրությունը հաշվի է առնվում սպանդային քաշով:

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար մսի արտադրության ցուցանիշները որոշվում են անդամ պետությունների՝ գյուղատնտեսության զարգացման պետական ծրագրերի եւ անասնաբուծության զարգացման ոլորտային ծրագրերի հետ փոխկապակցված գերատեսչական կանխատեսումներին համապատասխան: Գերատեսչական կանխատեսումները կարող են՝

պարունակել ցուցանիշներ՝ ըստ կենդանիների և թռչունների առանձին տեսակների (խոշոր եղջերավոր անասուններ, խոզեր, ոչխարներ, ընտանի թռչուններ, անասունների և թռչունների այլ տեսակներ): Մսի բոլոր տեսակների արտադրության կանխատեսումը (Π_M) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\Pi_M = \sum_i \Pi_{mi},$$

որտեղ Π_{mi} -ն i տեսակի մսի արտադրության կանխատեսումն է (տավարի միս, խոզի միս, ոչխարի միս, թռչնամիս, մսի այլ տեսակներ).

ներառել կանխատեսումային տվյալներ կենդանիների և թռչունների գլխաքանակի (տարվա սկզբին), սպանդի համար իրացվող անասունների և թռչունների գլխաքանակի և մսի արտադրության ծավալի մասին.

որոշել i տեսակի (Π_{mi}) մսի արտադրության կանխատեսվող ծավալը հետևյալ բանաձևով՝

$$\Pi_{mi} = H_i \times m_i \times v_i,$$

որտեղ՝

H_i -ն սպանդի համար իրացվող i տեսակի անասունների և թռչնի պլանավորվող գլխաքանակն է.

m_i -ն՝ սպանդի համար իրացվող i տեսակի անասունների և թռչնի միջին կենդանի զանգվածը.

v_i -ն՝ i տեսակի մսի սպանդային ելքի գործակիցը:

Համապատասխան գերատեսչական կանխատեսումների բացակայության դեպքում ընթացիկ տարվա և 2 կանխատեսումային տարիների համար մսի արտադրության ցուցանիշները որոշվում են հետևյալ հաշվարկային և փորձագիտական մեթոդների օգնությամբ՝

կենդանիների և թռչունների գլխաքանակը (տարվա սկզբին) կանխատեսվում է նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների կիրառմամբ.

սպանդի համար իրացվող i տեսակի անասունների եւ թռչունների գլխաքանակը (H_i) որոշվում է հետևյալ հարաբերակցությամբ՝

$$H_i - M_i \times y_i,$$

որտեղ՝

M_i -ն i տեսակի կենդանիների եւ թռչունների գլխաքանակի կանխատեսումն է (տարվա սկզբին).

y_i -ն՝ սպանդի համար i տեսակի անասունների եւ թռչունների իրացման գործակիցը, որը սահմանվում է որպես սպանդի համար իրացվող անասունների եւ թռչունների գլխաքանակի նկատմամբ՝ i տեսակի կենդանիների եւ թռչունների գլխաքանակի հարաբերակցության վերջին 3 տարվա համար միջին արժեք:

Կանխատեսումային ցուցանիշները հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետևյալ գործոնները՝

անասնաբուծության կերային բազայի ընթացիկ եւ կանխատեսվող վիճակը.

դիտարկվող ժամանակահատվածում իրականացվող՝ անասնաբուծության զարգացման մասով խոշոր ներդրումային ծրագրերը.

մսի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան:

Մթերատվության ցուցանիշները (սպանդի համար իրացվող անասունների եւ թռչնի միջին կենդանի զանգվածը եւ մսի սպանդային ելքի գործակիցները) կարող են սահմանվել որպես վերջին 3 տարվա համար միջին արժեքներ եւ ճշգրտվել՝ հաշվի առնելով կենդանիների եւ թռչունների մթերատվության բարձրացմանն ուղղված՝ անդամ պետությունների պլանավորվող միջոցառումները:

Կանխատեսումային գնահատումների ճշգրտությունը բարձրացնելու նպատակով մսի արտադրության հաշվարկը կարող է կատարվել առանձին՝ ըստ տնտեսության յուրաքանչյուր կատեգորիայի (հետագա գումարմամբ՝) գյուղատնտեսական կազմակերպություններում, գյուղացիական (ֆերմերային)

տնտեսություններում եւ բնակչության տնտեսություններում: Հաշվարկվել կարող է նաեւ կենդանիների եւ թռչունների գլխաքանակի տարեկան շարժի (նախրի շրջանառության) ամբողջական կանխատեսումը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

3. Ներսերում՝ ընդամենը
 այդ թվում՝
 փոխադարձ առեւտուր՝ ընդամենը
 այդ թվում՝ անդամ պետություններից՝

 ...
 արտաքին առեւտուր (ներմուծում)

3-րդ դիրքն արտացոլում է մսի եւ մսամթերքի ներսերման ընդհանուր ծավալը, այդ թվում՝ անդամ պետություններից (փոխադարձ առեւտուր), եւ մսի ու մսամթերքի ներմուծման մատակարարումները երրորդ երկրներից (արտաքին առեւտուր):

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար մսի եւ մսամթերքի ներսերման ցուցանիշները (OB_M) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$OB_M = \sum_i (\sum_k B_{Mik} + I_{Mi}),$$

որտեղ՝

B_{Mik} -ն k անդամ պետությունից i տեսակի մսի եւ մսամթերքի ներսերման կանխատեսումն է.

I_{Mi} -ն՝ i տեսակի մսի եւ մսամթերքի ներմուծումը (արտաքին առեւտուր):

Անդամ պետություններից մսի եւ մսամթերքի ներսերման եւ մսի ու մսամթերքի ներմուծման մատակարարումների կանխատեսումները կարող են որոշվել նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների օգնությամբ: Տվյալ կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետևյալ գործոնները՝

մսի եւ մսամթերքի՝ անդամ պետության կանխատեսվող պահանջմունքները.

մսի եւ մսամթերքի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան՝ ներառյալ ազգային շուկայում եւ մսի ու մսամթերքի հիմնական մատակարար պետություններում մսի եւ մսամթերքի գների հարաբերակցությունը.

մսի եւ մսամթերքի ներմուծմանը վերաբերող՝ անդամ պետությունների օրենսդրության ենթադրվող փոփոխությունները (մաքսատուրքերի չափերի, ներմուծման քվոտաների փոփոխություն եւ այլ փոփոխություններ):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվո- թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե- սում)	տարի (կանխատե- սում)
---------------------	------------------------------	-------------------	----------------------------	----------------------------

4. Ընդամենը ռեսուրսներ

Մսի եւ մսամթերքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի ռեսուրսային մասով (ռեսուրսների մասով) հանրագումարը (Pec_M) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Pec_M = 3_{H_M} + \Pi_M + B_M + I_M,$$

որտեղ՝

3_{H_M} -ն մսի եւ մսամթերքի պաշարներն են տարվա սկզբին.

Π_M -ն՝ բոլոր տեսակի մսերի արտադրությունը.

B_M -ն՝ մսի եւ մսամթերքի ներսերումը անդամ պետություններից.

I_M -ն՝ մսի եւ մսամթերքի ներմուծումը (արտաքին առետուր):

Ըստ մսի առանձին տեսակների պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի ռեսուրսային մասով (ռեսուրսների մասով) հանրագումարը (Pec_{Mi}) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Pec_{Mi} = 3_{H_{Mi}} + \Pi_{Mi} + B_{Mi} + I_{Mi},$$

որտեղ՝

Յ_{mi}-ն՝ i տեսակի մսի պաշարներն են տարվա սկզբին.

П_{mi}-ն՝ i տեսակի մսի արտադրությունը.

В_{mi}-ն՝ i տեսակի մսի ներսրերումը անդամ պետություններին.

И_{mi}-ն՝ i տեսակի մսի ներմուծումը (արտաքին առևտուր):

Մսի եւ մսամթերքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի բաշխիչ մասը (ռեսուրսների օգտագործումը) ներառում է հետեւյալ դիրքերը՝

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	--------------------------	-------------------	-----------------------	-----------------------

- 5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
 - այդ թվում՝
 - արտադրական սպառում՝ ընդամենը
 - այդ թվում՝
 - գյուղատնտեսությունում

5-րդ դիրքի «գյուղատնտեսությունում» ստորաենթադիրքն արտացոլում է գյուղատնտեսական արտադրողների մոտ (զագանաբուծական տնտեսություններում) գյուղատնտեսական կենդանիների կերի համար մսի ծախսման մասով տվյալները:

Մսի արտադրական սպառման կանխատեսումը կարող է հաշվարկվել նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների օգնությամբ:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	--------------------------	-------------------	-----------------------	-----------------------

- 5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
 - այդ թվում՝
 - արտադրական սպառում՝ ընդամենը
 - այդ թվում՝
 - ոչ սննդային նպատակներով վերամշակում

5-րդ դիրքի «ոչ սննդային նպատակներով վերամշակում» ստորաենթադիրքին վերաբերում են ոչ սննդային արտադրանքի արտադրության (մտակրային ալրի արտադրություն, դեղագործական արդյունաբերություն) համար վերամշակվող մսի ծավալները:

Ոչ սննդային նպատակներով մսի վերամշակման ծավալների կանխատեսումը կատարվում է նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների կիրառմամբ: Տվյալ կանխատեսումային ցուցանիշները հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

վերամշակող ձեռնարկությունների հզորությունների առկայությունը եւ ծանրաբեռնվածությունը.

դիտարկվող ժամանակահատվածում նոր վերամշակող ձեռնարկությունների ստեղծման եւ գործող վերամշակող ձեռնարկությունների զարգացման մասով ներդրումային ծրագրերը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
այդ թվում՝
պարենային նպատակով վերամշակում

5-րդ դիրքի «պարենային նպատակներով վերամշակում» ենթադիրքը ներառվում է ըստ մսի առանձին տեսակների (տավարի միս, խոզի միս, ոչխարի միս, թռչնամիս) պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումների բաշխիչ մասում եւ չի ներառվում մսի եւ մսամթերքի պահանջարկի եւ առաջարկի ընդհանուր կանխատեսման մեջ:

Տվյալ ենթադիրքին վերաբերում են մսամթերքի արտադրության համար գյուղատնտեսական արտադրողների, արտադրող ձեռնարկությունների եւ այլ կազմակերպությունների կողմից վերամշակվող մսի ծավալները:

Մասամբերքի համար մսի վերամշակման ծավալների կանխատեսումը կատարվում է նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների կիրառմամբ: Տվյալ կանխատեսումային ցուցանիշները հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

մսի վերամշակման ձեռնարկությունների հզորությունների առկայությունը եւ ծանրաբեռնվածությունը.

դիտարկվող ժամանակահատվածում մսի վերամշակման նոր ձեռնարկությունների ստեղծման եւ գործող ձեռնարկությունների զարգացման մասով ներդրումային ծրագրերը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը այդ թվում՝ կորուստներ

5-րդ դիրքի «կորուստներ» ենթադիրքն արտացոլում է արտադրությունից մինչեւ իրացում բոլոր փուլերում մսի եւ մասամբերքի կորուստների մասով տվյալները (գյուղատնտեսական արտադրողների, արտադրող ձեռնարկությունների, մեծածախ եւ մանրածախ առեւտրի կազմակերպությունների կորուստների մասով):

Կորուստների կանխատեսումը հաշվարկվում է՝ հաշվի առնելով վերջին 3 տարվա ռեսուրսներում կորուստների միջին տեսակարար կշիռը եւ մսի ու մասամբերքի կորուստների կրճատմանն ուղղված՝ անդամ պետությունների պլանավորվող միջոցառումները:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը այդ թվում՝ անձնական սպառում

5-րդ դիրքի «անձնական սպառում» ենթադիրքում ներառվում են մսի եւ մսամթերքի բոլոր տեսակների մասով տվյալները: Ըստ մսի տեսակների (տավարի միս, խոզի միս, ոչխարի միս, թռչնամիս) պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռում անձնական սպառման ֆոնդի կազմում ներառվում են այն մսի մասով տվյալները, որը տնային տնտեսություններում ստացվում է հում տեսքով, եւ չեն ներառվում սպառվող մսամթերքի մասով տվյալները:

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար մսի եւ մսամթերքի անձնական սպառման ցուցանիշները որոշվում են անդամ պետությունների՝ գյուղատնտեսության զարգացման պետական ծրագրերի հետ փոխկապակցված գերատեսչական կանխատեսումներին համապատասխան: Գերատեսչական կանխատեսումները կարող են՝

պարունակել ցուցանիշներ ըստ մսի եւ մսամթերքի առանձին տեսակների (տավարի միս, խոզի միս, ոչխարի միս, թռչնամիս, մսի այլ տեսակներ, ինչպես նաեւ մսամթերք): Անդամ պետության բնակչության կողմից մսի բոլոր տեսակների սպառման կանխատեսումը ($ЛПМ$) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$ЛПМ = \sum_i ЛП_{mi}$$

որտեղ $ЛП_{mi}$ -ն անդամ պետության i տեսակի մսի եւ մսամթերքի սպառման կանխատեսումն է.

որոշել անդամ պետության բնակչության կողմից i տեսակի մսի եւ մսամթերքի սպառման կանխատեսվող ծավալը ($ЛП_{mi}$) հետևյալ բանաձևով՝

$$ЛП_{mi} = СП_{mi} \times \Psi,$$

որտեղ՝

$СП_{mi}$ -ն անդամ պետության բնակչության կողմից մսի եւ i տեսակի մսից մսամթերքի՝ մեկ շնչին ընկնող կանխատեսվող միջին սպառումն է.

Ψ -ն՝ անդամ պետության բնակչության թվաքանակի կանխատեսումը:

Համապատասխան գերատեսչական կանխատեսումների բացակայության դեպքում ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար անդամ պետության բնակչության կողմից մսի եւ մսամթերքի անձնական սպառման ցուցանիշները որոշվում են հետեւյալ հաշվարկային եւ փորձագիտական մեթոդների օգնությամբ՝

անդամ պետության բնակչության կողմից i տեսակի մսի եւ մսամթերքի՝ մեկ շնչին ընկնող միջին սպառումը կանխատեսվում է անդամ պետության բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտներից կախվածության հիման վրա՝ սույն մեթոդաբանության թիվ 3 հավելվածում նշված մեթոդներով.

ընթացիկ տարվա եւ հաջորդ 2 տարիների համար անդամ պետության բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտներն ընդունվում են անդամ պետության սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսումներին համապատասխան.

ընթացիկ տարվա եւ հաջորդ 2 տարիների համար անդամ պետության բնակչության թվաքանակն ընդունվում է անդամ պետության ժողովրդագրական կանխատեսումներին համապատասխան:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվո- թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե- սում)	տարի (կանխատե- սում)
---------------------	------------------------------	-------------------	----------------------------	----------------------------

6. Դուրսբերում՝ ընդամենը
այդ թվում՝
փոխադարձ առևտուր՝ ընդամենը
այդ թվում՝ անդամ պետություններ՝

...
արտաքին առևտուր (արտահանում)

6-րդ դիրքն արտացոլում է մսի եւ մսամթերքի դուրսբերման ընդհանուր ծավալը, այդ թվում՝ անդամ պետություններ (փոխադարձ առևտուր), եւ մսի ու մսամթերքի արտահանման մատակարարումները երրորդ երկրներ (արտաքին առևտուր):

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար մսի եւ մսամթերքի դուրսբերման ցուցանիշները (OBB_M) որոշվում են հետեւյալ բանաձեւով՝

$$OBB_M = \sum_i (\sum_k BB_{Mik} + \Theta_{Mi}),$$

որտեղ՝

BB_{Mik} -ն k անդամ պետություն i տեսակի մսի եւ մսամթերքի դուրսբերման կանխատեսումն է.

Θ_{Mi} -ն՝ i տեսակի մսի եւ մսամթերքի արտահանումը (արտաքին առետուր):

Անդամ պետություններ մսի եւ մսամթերքի դուրսբերման եւ մսի ու մսամթերքի արտահանման մատակարարումների կանխատեսումները կարող են որոշվել նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների կիրառմամբ: Տվյալ կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

անդամ պետությունում մսի եւ մսամթերքի կանխատեսվող ռեսուրսները եւ դրանց ներքին օգտագործումը.

մսի եւ մսամթերքի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան՝ ներառյալ ազգային շուկայում եւ մսի ու մսամթերքի հիմնական սպառող պետություններում մսի եւ մսամթերքի գների հարաբերակցությունը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

7. Ընդամենը օգտագործում

Մսի եւ մսամթերքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի բաշխիչ մասով (ռեսուրսների օգտագործման մասով) հանրագումարը ($Ис_{ПМ}$) որոշվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Ис_{ПМ} = K_M + ПД_M + ПО_M + ЛП_M + BB_M + \Theta_M,$$

որտեղ՝

K_M -ն գյուղատնտեսությունում մսի եւ մսամթերքի արտադրական սպառումն է.

$ПД_M$ -ն՝ ոչ սննդային նպատակով մսի վերամշակումը.

$ПO_M$ -ն՝ մսի եւ մսամթերքի կորուստները.

$ЛП_M$ -ն՝ մսի եւ մսամթերքի անձնական սպառումը.

$ВВ_M$ -ն՝ մսի եւ մսամթերքի դուրսբերումն անդամ պետություններ.

$Э_M$ -ն՝ մսի եւ մսամթերքի արտահանումը (արտաքին առևտուր):

Ըստ մսի առանձին տեսակների պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի բաշխիչ մասով հանրագումարը ($ИсПМ_i$) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$ИсПМ_i = K_{Mi} + ПП_{Mi} + ПД_{Mi} + ПO_{Mi} + ЛП_{Mi} + ВВ_{Mi} + Э_{Mi}$$

որտեղ՝

K_{Mi} -ն գյուղատնտեսությունում i տեսակի մսի արտադրական սպառումն է.

$ПП_{Mi}$ -ն՝ i տեսակի մսի՝ պարենային նպատակներով վերամշակումը.

$ПД_{Mi}$ -ն՝ i տեսակի մսի ոչ սննդային նպատակով վերամշակումը.

$ПO_{Mi}$ ՝ i տեսակի մսի կորուստները.

$ЛП_{Mi}$ ՝ i տեսակի մսի անձնական սպառումը.

$ВВ_{Mi}$ ՝ անդամ պետություններ i տեսակի մսի դուրսբերումը.

$Э_{Mi}$ ՝ i տեսակի մսի արտահանումը (արտաքին առևտուր):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

8. Պաշարներ՝ տարվա վերջում

8-րդ դիրքն արտացոլում է գյուղատնտեսական արտադրողների մոտ, արտադրող ձեռնարկություններում, մեծածախ եւ մանրածախ առևտրի կազմակերպություններում մսի եւ մսամթերքի պաշարների մասով տվյալները:

Տարվա վերջում մսի եւ մսամթերքի պաշարների կանխատեսումը հաշվարկվում է՝ հաշվի առնելով՝

անդամ պետությունում մսի եւ մսամթերքի կանխատեսվող ռեսուրսները եւ դրանց ներքին օգտագործումը.

անդամ պետության սպառողական շուկայում մսի եւ մսամթերքի անհրաժեշտ պաշարների եւ մսի վերամշակման ձեռնարկություններում հումքի տեխնոլոգիական պաշարների ձեւավորումը.

մսի պահման համար սառնարանային հզորությունների առկայության եւ զարգացման մասին տվյալները:

IV. Կաթի եւ կաթնամթերքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռը

Կաթի եւ կաթնամթերքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռում ներառվում են կաթի բոլոր տեսակները ֆիզիկական քաշով եւ կաթնամթերքը ((կենդանական յուղ, պանիր, կաթնային պահածոներ, անքաշ կաթից արտադրանք, չոր կաթ, պաղպաղակ եւ այլն) (ԵՍՏՄ ՄՏԳ ԱԱ 0401- 0406, 2105 00 ծածկագրեր))՝ ըստ սույն մեթոդաբանության թիվ 4 հավելվածում նշված համապատասխան գործակիցների՝ բազիսային յուղայնության կաթի վերահաշվարկով:

Հաշվետու տարվա համար տվյալները հաշվարկվում են անդամ պետությունների պետական վիճակագրական մարմինների (ծառայությունների) կողմից հաստատվող մեթոդիկաներին համապատասխան՝ բացառությամբ «Ներսբերում» եւ «Դուրսբերում» ցուցանիշների (3-րդ եւ 6-րդ դիրքեր): Տվյալ

ցուցանիշները հաշվարկվում են ըստ սույն մեթոդաբանության թիվ 4 հավելվածում նշված համապատասխան գործակիցների՝ բազիսային յուղայնության կաթի վերահաշվարկով:

Կաթի եւ կաթնամթերքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի ռեսուրսային մասը (ռեսուրսները) ներառում է հետեւյալ դիրքերը՝

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվութուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	----------------------	----------------	--------------------	--------------------

1. Պաշարներ՝ տարվա սկզբին

1-ին դիրքը ներառում է գյուղատնտեսական արտադրողների մոտ (գյուղատնտեսական կազմակերպություններում, գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում եւ բնակչության տնտեսություններում), արտադրող ձեռնարկություններում, մեծածախ եւ մանրածախ առեւտրի կազմակերպություններում կաթի եւ կաթնամթերքի պաշարների մասով տվյալները:

Տարվա սկզբին կաթի եւ կաթնամթերքի պաշարների մասով տվյալները տեղափոխվում են 8-րդ դիրքից (համապատասխան նախորդ տարվա սյունակից):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվութուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	----------------------	----------------	--------------------	--------------------

2. Արտադրություն

Կաթի արտադրության ծավալում (2-րդ դիրք) ներառվում է կաթի արտադրությունը բոլոր կատեգորիաների տնտեսություններում՝

գյուղատնտեսական կազմակերպություններում.

գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում.

բնակչության տնտեսություններում:

Կաթի արտադրությունը հաշվի է առնվում բազիսային յուղայնությամբ:

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար կաթի արտադրության ցուցանիշները որոշվում են անդամ պետությունների՝ գյուղատնտեսության զարգացման պետական ծրագրերի եւ անասնաբուծության զարգացման ոլորտային ծրագրերի հետ փոխկապակցված գերատեսչական կանխատեսումներին համապատասխան: Գերատեսչական կանխատեսումները կարող են՝

ներառել կովերի տարեկան միջին գլխաքանակի, մթերատվության (մեկ կովի հաշվարկով կթվածքի) եւ կաթի արտադրության ծավալի մասին կանխատեսումային տվյալները.

որոշել կաթի արտադրության կանխատեսվող ծավալը (Π_{H}) հետեւյալ բանաձեւով՝

$$\Pi_{\text{H}} = M_{\text{K}} \times w + \pi_{\text{A}},$$

որտեղ՝

M_{K} -ն կովերի պլանավորվող տարեկան միջին գլխաքանակն է.

w -ն՝ մեկ կովի հաշվարկով տարեկան կթվածքը.

π_{A} -ն՝ այլ տեսակի կենդանիների կաթի արտադրությունը:

Համապատասխան գերատեսչական կանխատեսումների բացակայության դեպքում կովերի տարեկան միջին գլխաքանակի ցուցանիշները կանխատեսվում են նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների օգնությամբ: Տվյալ կանխատեսումային ցուցանիշները հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

անասնաբուծության կերային բազայի ընթացիկ եւ կանխատեսվող վիճակը.

դիտարկվող ժամանակահատվածում իրականացվող՝ անասնաբուծության զարգացման մասով խոշոր ներդրումային ծրագրերը.

կաթի եւ կաթնամթերքի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան:

Մթերատվության ցուցանիշները (մեկ կովի հաշվարկով տարեկան կթվածքը) կարող են սահմանվել որպես վերջին 3 տարվա համար միջին արժեքներ եւ ճշգրտվել՝ հաշվի առնելով կովերի մթերատվության բարձրացմանն ուղղված՝ անդամ պետությունների պլանավորվող միջոցառումները:

Կաթի արտադրության կանխատեսումային ծավալներում հաշվի է առնվում այլ տեսակի կենդանիների (այծի, զամբիկի եւ այլն) կաթի արտադրությունը:

Կանխատեսումային գնահատումների ճշգրտությունը բարձրացնելու նպատակով կաթի արտադրության հաշվարկը կարող է կատարվել առանձին՝ ըստ տնտեսության յուրաքանչյուր կատեգորիայի (հետագա գումարմամբ)՝ գյուղատնտեսական կազմակերպություններում, գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում եւ բնակչության տնտեսություններում: Հաշվարկվել կարող է նաեւ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի տարեկան շարժի ամբողջական կանխատեսումը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

- 3. Ներսերում՝ ընդամենը
 - այդ թվում՝
 - փոխադարձ առևտուր՝ ընդամենը
 - այդ թվում՝ անդամ պետություններից՝
 - _____
 - _____
 - ...
 - արտաքին առևտուր (ներմուծում)

3-րդ դիրքն արտացոլում է կաթի եւ կաթնամթերքի ներսերման ընդհանուր ծավալը, այդ թվում՝ անդամ պետություններից (փոխադարձ առևտուր), եւ կաթի ու կաթնամթերքի ներմուծման մատակարարումները երրորդ երկրներից (արտաքին առևտուր):

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար կաթի եւ կաթնամթերքի ներսւբերման ցուցանիշները (OB_н) որոշվում են հետեւյալ բանաձեւով՝

$$OB_{н} = \sum_k B_{HK} + I_{н},$$

որտեղ՝

B_{HK}-ն k անդամ պետությունից կաթի եւ կաթնամթերքի ներսւբերման կանխատեսումն է.

I_н-ն՝ կաթի եւ կաթնամթերքի ներմուծումը (արտաքին առեւտուր):

Անդամ պետություններից կաթի եւ կաթնամթերքի ներսւբերման եւ կաթի ու կաթնամթերքի ներմուծման մատակարարումների կանխատեսումները կարող են որոշվել նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների օգնությամբ: Տվյալ կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

կաթի եւ կաթնամթերքի՝ անդամ պետության կանխատեսվող պահանջմունքները.

կաթի եւ կաթնամթերքի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան՝ ներառյալ ազգային շուկայում եւ կաթի ու կաթնամթերքի հիմնական մատակարար պետություններում կաթի եւ կաթնամթերքի գների հարաբերակցությունը.

կաթի եւ կաթնամթերքի ներմուծմանը վերաբերող՝ անդամ պետությունների օրենսդրության ենթադրվող փոփոխությունները (մաքսատուրքերի չափերի, ներմուծման քվոտաների փոփոխություն եւ այլ փոփոխություններ):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

4. Ընդամենը ռեսուրսներ

Կաթի եւ կաթնամթերքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի ռեսուրսային մասով (ռեսուրսների մասով) հանրագումարը (Pec_H) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Pec_H = 3_{H_H} + \Pi_H + B_H + I_H,$$

որտեղ՝

3_{H_H} -ն տարվա սկզբին կաթի եւ կաթնամթերքի պաշարներն են.

Π_H -ն՝ կաթի բոլոր տեսակների արտադրությունը.

B_H -ն՝ անդամ պետություններից կաթի եւ կաթնամթերքի ներսւբերումը.

I_H -ն՝ կաթի եւ կաթնամթերքի ներմուծումը (արտաքին առևտուր):

Կաթի եւ կաթնամթերքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի բաշխիչ մասը (ռեսուրսների օգտագործումը) ներառում է հետևյալ դիրքերը՝

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվո թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	-----------------------------	-------------------	---------------------------	---------------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
այդ թվում՝
արտադրական սպառում՝ ընդամենը
այդ թվում՝
գյուղատնտեսությունում

5-րդ դիրքի «գյուղատնտեսությունում» ստորաենթադիրքն արտացոլում է գյուղատնտեսական մատղաշ կենդանիների աճեցման համար գյուղատնտեսական արտադրողների մոտ՝ կաթի ծախսման մասով տվյալները:

Կաթի արտադրական սպառման կանխատեսումը կարող է հաշվարկվել նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների օգնությամբ:

Գյուղատնտեսական մատղաշ կենդանիների ընթացիկ եւ կանխատեսվող գլխաքանակի մասին տվյալների առկայության դեպքում կաթի արտադրական սպառման կանխատեսումը կարող է որոշվել՝ հաշվի առնելով մատղաշ անասունների գլխաքանակը եւ վերջին 3 տարվա համար մեկ գլխի հաշվարկով աճեցման համար կաթի միջին ծախսումը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը այդ թվում՝ արտադրական սպառում՝ ընդամենը այդ թվում՝ ոչ սննդային նպատակով վերամշակում

5-րդ դիրքի «ոչ սննդային նպատակներով վերամշակում» ստորաենթադիրքն արտացոլում է ոչ սննդային արտադրանքի (տեխնիկական կազեին եւ այլն) արտադրության համար վերամշակվող կաթի մասով տվյալները:

Ոչ սննդային նպատակներով կաթի վերամշակման ծավալների կանխատեսումը կատարվում է նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների կիրառմամբ: Տվյալ կանխատեսումային ցուցանիշները հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

վերամշակող ձեռնարկությունների հզորությունների առկայությունը եւ ծանրաբեռնվածությունը.

դիտարկվող ժամանակահատվածում նոր վերամշակող ձեռնարկությունների ստեղծման եւ գործող վերամշակող ձեռնարկությունների զարգացման մասով ներդրումային ծրագրերը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը այդ թվում՝ կորուստներ

5-րդ դիրքի «կորուստներ» ենթադիրքն արտացոլում է արտադրությունից մինչև իրացում բոլոր փուլերում կաթի եւ կաթնամթերքի կորուստների մասով տվյալները (գյուղատնտեսական արտադրողների, արտադրող ձեռնարկությունների, մեծածախ եւ մանրածախ առևտրի կազմակերպությունների կորուստների մասով):

Կորուստների կանխատեսումը հաշվարկվում է՝ հաշվի առնելով վերջին 3 տարվա համար ռեսուրսներում դրանց միջին տեսակարար կշիռը եւ կաթի ու կաթնամթերքի կորուստների կրճատմանն ուղղված՝ անդամ պետությունների պլանավորվող միջոցառումները:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	--------------------------	-------------------	-----------------------	-----------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
այդ թվում՝
անձնական սպառում

5-րդ դիրքի «անձնական սպառում» ենթադիրքում ներառվում են կաթի եւ կաթնամթերքի բոլոր տեսակների մասով տվյալները:

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար կաթի եւ կաթնամթերքի անձնական սպառման ցուցանիշները որոշվում են անդամ պետությունների գյուղատնտեսության զարգացման պետական ծրագրերի հետ փոխկապակցված գերատեսչական կանխատեսումներին համապատասխան: Գերատեսչական կանխատեսումները կարող են որոշել անդամ պետության բնակչության կողմից կաթի եւ կաթնամթերքի (ՄՄԻ) սպառման կանխատեսվող ծավալը հետեւյալ բանաձեւով՝

$$ՄՄԻ = \text{ՄՄ} \times \text{Կ},$$

որտեղ՝

ՄՄ-ն անդամ պետության բնակչության կողմից կաթի եւ կաթնամթերքի՝ մեկ շնչին ընկնող՝ կանխատեսվող միջին սպառումն է.

Կ-ն՝ անդամ պետության բնակչության թվաքանակի կանխատեսումը:

Համապատասխան գերատեսչական կանխատեսումների բացակայության դեպքում ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար անդամ պետության բնակչության կողմից կաթի եւ կաթնամթերքի անձնական սպառման ցուցանիշները որոշվում են հետեւյալ հաշվարկային եւ փորձագիտական մեթոդների օգնությամբ՝

անդամ պետության բնակչության կողմից կաթի եւ կաթնամթերքի՝ մեկ շնչին ընկնող միջին սպառումը կանխատեսվում է անդամ պետության բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտներից կախվածության հիման վրա՝ սույն մեթոդաբանության թիվ 3 հավելվածում նշված մեթոդների կիրառմամբ.

ընթացիկ տարվա եւ հաջորդ 2 տարիների համար անդամ պետության բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները ընդունվում են անդամ պետության սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսումներին համապատասխան.

ընթացիկ տարվա եւ հաջորդ 2 տարիների համար անդամ պետության բնակչության թվաքանակն ընդունվում է անդամ պետության ժողովրդագրական կանխատեսումներին համապատասխան:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվո- թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե- սում)	տարի (կանխատե- սում)
---------------------	------------------------------	-------------------	----------------------------	----------------------------

6. Դուրսբերում՝ ընդամենը
այդ թվում՝
փոխադարձ առևտուր՝ ընդամենը
այդ թվում՝ անդամ պետություններ՝

...
արտաքին առևտուր (արտահանում)

6-րդ դիրքն արտացոլում է կաթի եւ կաթնամթերքի դուրսբերման ընդհանուր ծավալը, այդ թվում՝ անդամ պետություններ (փոխադարձ առևտուր), եւ կաթի ու կաթնամթերքի արտահանման մատակարարումները երրորդ երկրներ (արտաքին առևտուր):

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար կաթի եւ կաթնամթերքի դուրսբերման ցուցանիշները (OBB_н) որոշվում են հետեւյալ բանաձեւով՝

$$OBB_{н-} = E_k BB_{Hk+} \Theta_{н},$$

որտեղ՝

BB_{нк}-ն k անդամ պետություն կաթի եւ կաթնամթերքի դուրսբերման կանխատեսումն է.

Θ_н-ն՝ կաթի եւ կաթնամթերքի արտահանումը (արտաքին առետուր):

Անդամ պետություններ կաթի եւ կաթնամթերքի դուրսբերման եւ կաթի ու կաթնամթերքի արտահանման մատակարարումների կանխատեսումները կարող են որոշվել նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների կիրառմամբ: Տվյալ կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

անդամ պետությունում կաթի եւ կաթնամթերքի կանխատեսվող ռեսուրսները եւ դրանց ներքին օգտագործումը.

կաթի եւ կաթնամթերքի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան՝ ներառյալ ազգային շուկայում եւ կաթի ու կաթնամթերքի հիմնական սպառող պետություններում կաթի եւ կաթնամթերքի գների հարաբերակցությունը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

7. Ընդամենը օգտագործում

Կաթի եւ կաթնամթերքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի բաշխիչ մասով (ռեսուրսների օգտագործման մասով) հանրագումարը (Исп_н) որոշվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Исп_{\text{H}} = K_{\text{H}} + ПД_{\text{H}} + ПО_{\text{H}} + ЛП_{\text{H}} + ВВ_{\text{H}} + Э_{\text{H}},$$

որտեղ՝

K_{H} -ն գյուղատնտեսությունում կաթի արտադրական սպառումն է.

$ПД_{\text{H}}$ -ն՝ ոչ սննդային նպատակներով կաթի վերամշակումը.

$ПО_{\text{H}}$ -ն՝ կաթի եւ կաթնամթերքի կորուստները.

$ЛП_{\text{H}}$ -ն՝ կաթի եւ կաթնամթերքի անձնական սպառումը.

$ВВ_{\text{H}}$ -ն՝ անդամ պետություններ կաթի եւ կաթնամթերքի դուրսբերումը.

$Э_{\text{H}}$ -ն՝ կաթի եւ կաթնամթերքի արտահանումը (արտաքին առևտուր):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվության)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-------------------------	-------------------	-----------------------	-----------------------

8. Պաշարներ՝ տարվա վերջում

Ց-րդ դիրքն արտացոլում է գյուղատնտեսական արտադրողների մոտ, արտադրող ձեռնարկություններում, մեծածախ եւ մանրածախ առևտրի կազմակերպություններում կաթի եւ կաթնամթերքի պաշարների մասով տվյալները:

Տարվա վերջում կաթի եւ կաթնամթերքի պաշարների կանխատեսումը հաշվարկվում է՝ հաշվի առնելով՝

անդամ պետությունում կաթի եւ կաթնամթերքի կանխատեսվող ռեսուրսները եւ դրանց ներքին օգտագործումը.

սպառողական շուկայում կաթի եւ կաթնամթերքի անհրաժեշտ պաշարների եւ գյուղատնտեսական արտադրողների եւ կաթի վերամշակման ձեռնարկություններում հումքի տեխնոլոգիական պաշարների ձեւավորումը:

V. Շաքարի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռը

Շաքարի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռում ներառվում է շաքարի ճակնդեղից եւ եղեգնաշաքար-հումքից արտադրված սպիտակ շաքարը, եւ չի ներառվում շաքարի օգտագործմամբ արտադրված մթերքը (ԵՍՏՄ ԱՏԳ ԱԱ 1701 99 100 1 եւ 1701 99 100 9 ծածկագրեր):

Հաշվետու տարվա տվյալները հաշվարկվում են անդամ պետությունների պետական վիճակագրական մարմինների (ծառայությունների) կողմից հաստատվող մեթոդիկաներին համապատասխան:

Շաքարի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի ռեսուրսային մասը (ռեսուրսները) ներառում է հետևյալ դիրքերը՝

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

1. Պաշարներ՝ տարվա սկզբին

1-ին դիրքը ներառում է արտադրող ձեռնարկություններում, մեծածախ եւ մանրածախ առևտրի կազմակերպություններում շաքարի պաշարների մասով տվյալները:

Տարվա սկզբին շաքարի պաշարների մասով տվյալները տեղափոխվում են 8-րդ դիրքից (համապատասխան նախորդ տարվա սյունակից):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

2. Արտադրություն՝ ընդամենը այդ թվում՝

շաքարի ճակնդեղից

շաքար-հումքից

2-րդ դիրքը ներառում է շաքարի ճակնդեղից եւ շաքար-հումքից շաքարի արտադրության ծավալը: Շաքարի արտադրության ծավալը ներառում է սեփականության բոլոր ձեւերի կազմակերպություններում արտադրված ամբողջ արտադրանքը (անկախ հիմնական գործունեության տեսակից): Շաքարի արտադրության ծավալը հաշվի է առնվում առանց վերամշակումից ստացվող արտադրանքի: Շաքարավազի մասով արտադրության ծավալը ներառում է նաեւ շաքար-ռաֆինադի արտադրության համար օգտագործված շաքարի ծավալը: Կրկնակի հաշվարկից խուսափելու նպատակով շաքար-ռաֆինադի ծավալն արտադրության ծավալի մեջ չի ներառվում:

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար շաքարի արտադրության ցուցանիշները որոշվում են անդամ պետությունների գյուղատնտեսության զարգացման պետական ծրագրերի հետ փոխկապակցված գերատեսչական կանխատեսումներին համապատասխան:

Համապատասխան գերատեսչական կանխատեսումների բացակայության դեպքում շաքարի արտադրության ցուցանիշները կանխատեսվում են նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների օգնությամբ: Տվյալ կանխատեսումային ցուցանիշները հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

շաքարի գործարանների հզորությունների առկայությունը եւ ծանրաբեռնվածությունը.

դիտարկվող ժամանակահատվածում շաքարի նոր գործարանների ստեղծման եւ գործող գործարանների զարգացման մասով խոշոր ներդրումային ծրագրերը.

շաքարի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան:

Կանխատեսումային գնահատումների ճշգրտությունը բարձրացնելու նպատակով կարող է կատարվել շաքարի ճակնդեղից եւ շաքար-հումքից շաքարի արտադրության առանձին հաշվարկ:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

3. Ներաբերում՝ ընդամենը
այդ թվում՝
փոխադարձ առևտուր՝ ընդամենը
այդ թվում՝ անդամ պետություններից՝

...
արտաքին առևտուր (ներմուծում)

3-րդ դիրքն արտացոլում է շաքարի ներաբերման ընդհանուր ծավալը, այդ թվում՝ անդամ պետություններից (փոխադարձ առևտուր), եւ շաքարի ներմուծման մատակարարումները երրորդ երկրներից (արտաքին առևտուր):

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար շաքարի ներաբերման ցուցանիշները (OB_c) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$OB_c = E_k B_{ck} + I_c$$

որտեղ՝

B_{ck}-ն κ անդամ պետությունից շաքարի ներաբերման կանխատեսումն է.

I_c-ն՝ շաքարի ներմուծումը (արտաքին առևտուր):

Անդամ պետություններից շաքարի ներաբերման եւ շաքարի ներմուծման մատակարարումների կանխատեսումները կարող են որոշվել նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների օգնությամբ: Տվյալ կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետևյալ գործոնները՝

անդամ պետության՝ շաքարի կանխատեսվող պահանջումները.

շաքարի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան՝ ներառյալ ազգային շուկայում եւ շաքարի հիմնական մատակարար պետություններում շաքարի գների հարաբերակցությունը.

շաքարի ներմուծմանը վերաբերող՝ անդամ պետությունների օրենսդրության ենթադրվող փոփոխությունները (մաքսատուրքերի չափերի, ներմուծման քվոտաների փոփոխություն եւ այլ փոփոխություններ):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

4. Ընդամենը ռեսուրսներ

Շաքարի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի ռեսուրսային մասով (ռեսուրսների մասով) հանրագումարը (Pec) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Pec = 3H_c + \Pi_c + B_c + I_c,$$

որտեղ՝

3H_c-ն տարվա սկզբին շաքարի պաշարներն են.

Π_c-ն՝ շաքարի արտադրությունը (առանց վերամշակումից ստացվող արտադրանքի).

B_c-ն՝ անդամ պետություններից շաքարի ներսերումը.

I_c-ն՝ շաքարի ներմուծումը (արտաքին առևտուր):

Շաքարի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի բաշխիչ մասը (ռեսուրսների օգտագործումը) ներառում է հետևյալ դիրքերը՝

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը

այդ թվում՝

ոչ սննդային նպատակներով վերամշակում

5-րդ դիրքի «ոչ սննդային նպատակներով վերամշակում» ենթադիրքը ներառում է ոչ սննդային արտադրանքի (սպիրտի արտադրությունը արտադրող

ձեռնարկություններում, դեղագործական արդյունաբերություն եւ այլն) արտադրության համար վերամշակվող շաքարի մասով տվյալները:

Ոչ սննդային նպատակներով շաքարի վերամշակման ծավալների կանխատեսումը կատարվում է նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների օգնությամբ: Տվյալ կանխատեսումային ցուցանիշները հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

վերամշակող ձեռնարկությունների հզորությունների առկայությունը եւ ծանրաբեռնվածությունը. դիտարկվող ժամանակահատվածում նոր վերամշակող ձեռնարկությունների ստեղծման եւ գործող ձեռնարկությունների զարգացման մասով ներդրումային ծրագրերը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը,
այդ թվում՝
պարենային նպատակով վերամշակում

5-րդ դիրքի «պարենային նպատակներով վերամշակում» ենթադիրքում հաշվի են առնվում արտադրող ձեռնարկություններում սննդամթերքի (հրուշակային արտադրատեսակների, սննդային խտանյութերի, ոչ ալկոհոլային ըմպելիքների եւ այլն) արտադրությունում օգտագործվող շաքարի ծավալները:

Պարենային նպատակներով շաքարի վերամշակման ծավալների կանխատեսումը կատարվում է նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների կիրառմամբ: Տվյալ կանխատեսումային ցուցանիշը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

վերամշակող ձեռնարկությունների հզորությունների առկայությունը եւ ծանրաբեռնվածությունը.

դիտարկվող ժամանակահատվածում նոր վերամշակող ձեռնարկությունների ստեղծման եւ գործող վերամշակող ձեռնարկությունների զարգացման մասով ներդրումային ծրագրերը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը այդ թվում՝ կորուստներ

5-րդ դիրքի «կորուստներ» ենթադիրքն արտացոլում է արտադրությունից մինչեւ իրացում բոլոր փուլերում շաքարի կորուստների մասով տվյալները (արտադրող ձեռնարկությունների, մեծածախ եւ մանրածախ առևտրի կազմակերպությունների կորուստների մասով):

Կորուստների կանխատեսումը հաշվարկվում է՝ հաշվի առնելով վերջին 3 տարվա համար ռեսուրսներում դրանց միջին տեսակարար կշիռը եւ շաքարի կորուստների կրճատմանն ուղղված՝ անդամ պետությունների պլանավորվող միջոցառումները:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը այդ թվում՝ անձնական սպառում

5-րդ դիրքի «անձնական սպառում» ենթադիրքում հաշվի են առնվում տնային տնտեսություններում ստացվող շաքարի մասով տվյալները, եւ հաշվի չեն առնվում դրա վերամշակումից ստացվող արտադրանքի մասով տվյալները:

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար շաքարի անձնական սպառման ցուցանիշները որոշվում են անդամ պետությունների գյուղատնտեսության զարգացման պետական ծրագրերի հետ փոխկապակցված

գերատեսչական կանխատեսումներին համապատասխան: Գերատեսչական կանխատեսումները կարող են որոշել անդամ պետության բնակչության կողմից շաքարի սպառման կանխատեսվող ծավալը (ՄՄԵ) հետևյալ բանաձևով՝

$$\text{ՄՄԵ} = \text{ՄՄԵ} \times \text{Կ},$$

որտեղ՝

ՄՄԵ-ն անդամ պետության բնակչության կողմից՝ շաքարի մեկ շնչին ընկնող կանխատեսվող միջին սպառումն է.

Կ-ն՝ անդամ պետության բնակչության թվաքանակի կանխատեսումը:

Համապատասխան գերատեսչական կանխատեսումների բացակայության դեպքում ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար անդամ պետության բնակչության կողմից շաքարի անձնական սպառման ցուցանիշները որոշվում են հետևյալ հաշվարկային եւ փորձագիտական մեթոդների օգնությամբ՝

անդամ պետության բնակչության կողմից շաքարի մեկ շնչին ընկնող միջին սպառումը կանխատեսվում է անդամ պետության բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտներից կախվածության հիման վրա՝ սույն մեթոդաբանության թիվ 3 հավելվածում նշված մեթոդների կիրառմամբ.

ընթացիկ տարվա եւ հաջորդ 2 տարիների համար անդամ պետության բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտներն ընդունվում են անդամ պետության սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսումներին համապատասխան.

ընթացիկ տարվա եւ հաջորդ 2 տարիների համար անդամ պետության բնակչության թվաքանակն ընդունվում է անդամ պետության ժողովրդագրական կանխատեսումներին համապատասխան:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվութ յուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսո ւմ)	տարի (կանխատես ում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

6. Դուրսերում՝ ընդամենը

այդ թվում՝

փոխադարձ առևտուր՝ ընդամենը

այդ թվում՝ անդամ պետություններ՝

...

արտաքին առևտուր (արտահանում)

6-րդ դիրքն արտացոլում է շաքարի դուրսերման ընդհանուր ծավալը, այդ թվում՝ անդամ պետություններ (փոխադարձ առևտուր), եւ շաքարի արտահանման մատակարարումները երրորդ երկրներ (արտաքին առևտուր):

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար շաքարի դուրսերման ցուցանիշները (OBB_c) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$OBB_c = \sum_k BB_{ck} + \Theta_c,$$

որտեղ՝

BB_{ck} -ն k անդամ պետություն շաքարի դուրսերման կանխատեսումն է.

Θ_c -ն՝ շաքարի արտահանումը (արտաքին առևտուր):

Անդամ պետություններ շաքարի դուրսերման եւ շաքարի արտահանման մատակարարումների կանխատեսումները կարող են որոշվել նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների կիրառմամբ: Տվյալ կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետևյալ գործոնները՝

անդամ պետությունում շաքարի կանխատեսվող ռեսուրսները եւ դրանց ներքին օգտագործումը.

շաքարի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան՝ ներառյալ ազգային շուկայում եւ շաքարի հիմնական սպառող պետություններում շաքարի գների հարաբերակցությունը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

7. Ընդամենը օգտագործում

Շաքարի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի բաշխիչ մասով (ռեսուրսների օգտագործման մասով) հանրագումարը (Испс) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Испс} = \text{ППс} + \text{ПДс} + \text{ПОс} + \text{ЛПс} + \text{ВВс} + \text{Эс},$$

որտեղ՝

ППс-ն պարենային նպատակներով շաքարի վերամշակումն է.

ПДс-ն՝ ոչ սննդային նպատակներով շաքարի վերամշակումը.

ПОс-ն՝ շաքարի կորուստները.

ЛПс-ն՝ շաքարի անձնական սպառումը.

ВВс-ն՝ անդամ պետություններ շաքարի դուրսբերումը.

Эс-ն՝ շաքարի արտահանումը (արտաքին առևտուր):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

8. Պաշարներ՝ տարվա վերջում

8-րդ դիրքը ներառում է արտադրող ձեռնարկություններում, մեծածախ եւ մանրածախ առևտրի կազմակերպություններում շաքարի պաշարների մասով տվյալները:

Տարվա վերջում շաքարի պաշարների կանխատեսումը հաշվարկվում է՝ հաշվի առնելով՝

անդամ պետությունում շաքարի կանխատեսվող ռեսուրսները եւ դրանց ներքին օգտագործումը.

սպառողական շուկայում շաքարի անհրաժեշտ պաշարների եւ սննդաարդյունաբերական ձեռնարկություններում հումքի տեխնոլոգիական պաշարների ձեւավորումը:

VI. Բուսական յուղերի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռը

Բուսական յուղերի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռն արտացոլում է կանխատեսվող ռեսուրսները՝ ըստ բուսական յուղերի ստացման աղբյուրների եւ օգտագործման ուղղությունների՝ առանց դրանց օգտագործմամբ արտադրված արտադրանքը հաշվի առնելու (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 1507 - 1515 ծածկագրեր):

Հաշվետու տարվա համար տվյալները հաշվարկվում են անդամ պետությունների պետական վիճակագրական մարմինների (ծառայությունների) կողմից հաստատվող մեթոդիկաներին համապատասխան:

Բուսական յուղերի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի ռեսուրսային մասը (ռեսուրսները) ներառում է հետեւյալ դիրքերը՝

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

1. Պաշարներ՝ տարվա սկզբին

1-ին դիրքը ներառում է արտադրող ձեռնարկություններում, մեծածախ եւ մանրածախ առևտրի կազմակերպություններում բուսական յուղերի մասով տվյալները:

Տարվա սկզբին բուսական յուղերի պաշարների մասով տվյալները տեղափոխվում են 8-րդ դիրքից (համապատասխան նախորդ տարվա սյունակից):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվո- թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե- սում)	տարի (կանխատե- սում)
2. Արտադրություն՝ ընդամենը այդ թվում՝ արեւածաղկի յուղ սոյայի յուղ հլածուկի յուղ յուղերի այլ տեսակներ				

Բուսական յուղերի (2-րդ դիրք) արտադրության ծավալը ներառում է սեփականության բոլոր ձևերի կազմակերպություններում արտադրված ամբողջ արտադրանքը (անկախ հիմնական գործունեության տեսակից): Բուսական յուղերի արտադրության ծավալը հաշվի է առնվում առանց դրանց օգտագործմամբ արտադրված արտադրանքի: Բուսական յուղերի մասով ներառվում են նաև շշալցված բուսական յուղերի արտադրության համար օգտագործված ծավալները: Կրկնակի հաշվարկից խուսափելու նպատակով շշալցված բուսական յուղերը արտադրության ծավալի մեջ չեն ներառվում:

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար բուսական յուղերի արտադրության ցուցանիշները որոշվում են անդամ պետությունների գյուղատնտեսության զարգացման պետական ծրագրերի հետ փոխկապակցված գերատեսչական կանխատեսումներին համապատասխան:

Համապատասխան գերատեսչական կանխատեսումների բացակայության դեպքում բուսական յուղերի արտադրության ցուցանիշները կանխատեսվում են նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների օգնությամբ: Տվյալ կանխատեսումային ցուցանիշները հաշվարկելիս հաշվի են առնվում նաև հետեւյալ գործոնները՝

յուղի վերամշակման ձեռնարկությունների հզորությունների առկայությունը եւ ծանրաբեռնվածությունը.

դիտարկվող ժամանակահատվածում յուրի վերամշակման նոր ձեռնարկությունների ստեղծման եւ գործող ձեռնարկությունների զարգացման մասով խոշոր ներդրումային ծրագրերը.

բուսական յուղերի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան:

Կանխատեսումային գնահատումների ճշգրտությունը բարձրացնելու նպատակով կարող է կատարվել արտադրության առանձին հաշվարկ ըստ բուսական յուղերի տեսակների (արեւածաղկի յուղ, սոյայի յուղ, հլածուկի յուղ եւ այլն):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվության)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-------------------------	-------------------	-----------------------	-----------------------

3. Ներսերում՝ ընդամենը
 այդ թվում՝
 փոխադարձ առևտուր՝ ընդամենը
 այդ թվում՝ անդամ պետություններից՝

 ...
 արտաքին առևտուր (ներմուծում)

3-րդ դիրքն արտացոլում է բուսական յուղերի ներսերման ընդհանուր ծավալը, այդ թվում՝ անդամ պետություններից (փոխադարձ առևտուր), եւ բուսական յուղերի ներմուծման մատակարարումները երրորդ երկրներից (արտաքին առևտուր):

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար բուսական յուղերի ներսերման ցուցանիշները (OB_p) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$OB_p = \sum_k B_{pk} + I_p,$$

որտեղ՝

B_{pk} -ն k անդամ պետությունից բուսական յուղերի ներսերման կանխատեսումն է.

I_p -ն՝ բուսական յուղերի ներմուծումը (արտաքին առևտուր):

Անդամ պետություններից բուսական յուղերի ներսերման եւ բուսական յուղերի ներմուծման մատակարարումների կանխատեսումները կարող են որոշվել նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների օգնությամբ: Տվյալ կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

անդամ պետության՝ բուսական յուղերի կանխատեսվող պահանջմունքները.

բուսական յուղերի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան՝ ներառյալ ազգային շուկայում եւ բուսական յուղերի հիմնական մատակարար պետություններում բուսական յուղերի գների հարաբերակցությունը.

բուսական յուղերի ներմուծմանը վերաբերող՝ անդամ պետությունների օրենսդրության ենթադրվող փոփոխությունները (մաքսատուրքերի չափերի, ներմուծման քվոտաների փոփոխություն եւ այլ փոփոխություններ):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

4. Ընդամենը ռեսուրսներ

Բուսական յուղերի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի ռեսուրսային մասով (ռեսուրսների մասով) հանրագումարը (Pec_p) որոշվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Pec_p = Z_{HP} + \Pi_p + B_p + I_p,$$

որտեղ՝

Z_{HP} -ն տարվա սկզբին բուսական յուղերի պաշարներն են.

Π_p -ն՝ բուսական յուղերի արտադրությունը.

B_p -ն՝ անդամ պետություններից յուղերի ներսերումը.

I_p -ն՝ բուսական յուղերի ներմուծումը (արտաքին առևտուր):

Բուսական յուղերի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի բաշխիչ մասը (ռեսուրսների օգտագործումը) ներառում է հետեւյալ դիրքերը՝

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
այդ թվում՝
ոչ սննդային նպատակներով վերամշակում

5-րդ դիրքի «ոչ սննդային նպատակներով վերամշակում» ենթադիրքը ներառում է արտադրող ձեռնարկություններում օլիֆի, լաքի եւ այլ ոչ սննդային արտադրանքի համար վերամշակվող բուսական յուղերի մասով տվյալները:

Ոչ սննդային նպատակով բուսական յուղերի վերամշակման ծավալների կանխատեսումը կատարվում է նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների օգնությամբ: Տվյալ կանխատեսումային ցուցանիշը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

վերամշակող ձեռնարկությունների հզորությունների առկայությունը եւ ծանրաբեռնվածությունը.

դիտարկվող ժամանակահատվածում նոր վերամշակող ձեռնարկությունների ստեղծման եւ գործող ձեռնարկությունների զարգացման մասով ներդրումային ծրագրերը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
այդ թվում՝
պարենային նպատակներով վերամշակում

5-րդ դիրքի «պարենային նպատակներով վերամշակում» ենթադիրքում հաշվի են առնվում արտադրող ձեռնարկություններում յուղ պարունակող սննդամթերքի (մարգարին, մարգարինային արտադրանք եւ այլն) արտադրության համար վերամշակվող բուսական յուղերի ծավալները:

Պարենային նպատակով բուսական յուղերի վերամշակման ծավալների կանխատեսումը կատարվում է նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների կիրառմամբ: Կանխատեսումային ցուցանիշը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

վերամշակող ձեռնարկությունների հզորությունների առկայությունը եւ ծանրաբեռնվածությունը.

դիտարկվող ժամանակահատվածում նոր վերամշակող ձեռնարկությունների ստեղծման եւ գործող ձեռնարկությունների զարգացման մասով ներդրումային ծրագրերը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը այդ թվում՝ կորուստներ

5-րդ դիրքի «կորուստներ» ենթադիրքն արտացոլում է արտադրությունից մինչեւ իրացում բոլոր փուլերում բուսական յուղերի կորուստների մասով տվյալները (արտադրող ձեռնարկությունների, մեծածախ եւ մանրածախ առևտրի կազմակերպությունների կորուստների մասով):

Կորուստների կանխատեսումը հաշվարկվում է՝ հաշվի առնելով վերջին 3 տարվա համար ռեսուրսներում դրանց միջին տեսակարար կշիռը եւ բուսական յուղերի կորուստների կրճատմանն ուղղված՝ անդամ պետությունների պլանավորվող միջոցառումները:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը այդ թվում՝ անձնական սպառում

5-րդ դիրքի «անձնական սպառում» ենթադիրքում հաշվի են առնվում տնային տնտեսություններում ստացվող բուսական յուղերի մասով տվյալները, եւ հաշվի չի առնվում դրա վերամշակումից ստացվող արտադրանքը:

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար բուսական յուղերի անձնական սպառման ցուցանիշները որոշվում են անդամ պետությունների գյուղատնտեսության զարգացման պետական ծրագրերի հետ փոխկապակցված գերատեսչական կանխատեսումներին համապատասխան: Գերատեսչական կանխատեսումներով կարող են որոշվել անդամ պետության բնակչության կողմից բուսական յուղերի սպառման կանխատեսվող ծավալները (ՄՄԲ) հետեւյալ բանաձեւով՝

$$\text{ՄՄԲ} = \text{ՄՄ} \times \text{Կ},$$

որտեղ՝

ՄՄ-ն անդամ պետության բնակչության կողմից մեկ շնչին ընկնող բուսական յուղերի կանխատեսվող միջին սպառումն է.

Կ-ն՝ անդամ պետության բնակչության թվաքանակի կանխատեսումը:

Համապատասխան գերատեսչական կանխատեսումների բացակայության դեպքում ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար անդամ պետության բնակչության կողմից բուսական յուղերի անձնական սպառման ցուցանիշները որոշվում են հետեւյալ հաշվարկային եւ փորձագիտական մեթոդների օգնությամբ՝

անդամ պետության բնակչության կողմից բուսական յուղերի մեկ շնչին ընկնող միջին սպառումը կանխատեսվում է անդամ պետության բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտներից կախվածության հիման վրա՝ սույն մեթոդաբանության թիվ 3 հավելվածում նշված մեթոդների կիրառմամբ.

ընթացիկ տարվա եւ հաջորդ 2 տարիների համար անդամ պետության բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտներն ընդունվում են անդամ պետության սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսումներին համապատասխան.

ընթացիկ տարվա եւ հաջորդ 2 տարիների համար անդամ պետության բնակչության թվաքանակն ընդունվում է անդամ պետության ժողովրդագրական կանխատեսումներին համապատասխան:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	--------------------------	-------------------	-----------------------	-----------------------

6. Դուրսբերում՝ ընդամենը
 այդ թվում՝
 փոխադարձ առեւտուր՝ ընդամենը
 այդ թվում՝ անդամ պետություններ՝

 ...
 արտաքին առեւտուր (արտահանում)

6-րդ դիրքն արտացոլում է բուսական յուղերի դուրսբերման ընդհանուր ծավալը, այդ թվում՝ անդամ պետություններ (փոխադարձ առեւտուր), եւ բուսական յուղերի արտահանման մատակարարումները երրորդ երկրներ (արտաքին առեւտուր):

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար բուսական յուղերի դուրսբերման ցուցանիշները (OBB_p) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$OBB_p = \sum_k BB_{pk} + \Xi_p$$

որտեղ՝

BB_{pk} -ն k անդամ պետություն բուսական յուղերի դուրսբերման կանխատեսումն է.

Ξ_p -ն՝ բուսական յուղերի արտահանումը (արտաքին առեւտուր):

Անդամ պետություններ բուսական յուղերի դուրսբերման եւ բուսական յուղերի արտահանման մատակարարումների կանխատեսումները կարող են որոշվել նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի

մեթոդների եւ փորձագիտական մեթոդների կիրառմամբ: Տվյալ կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

անդամ պետությունում բուսական յուղերի կանխատեսվող ռեսուրսները եւ դրանց ներքին օգտագործումը.

բուսական յուղերի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան՝ ներառյալ ազգային շուկայում եւ բուսական յուղերի հիմնական սպառող պետություններում բուսական յուղերի գների հարաբերակցությունը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

7. Ընդամենը օգտագործում

Բուսական յուղերի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի բաշխիչ մասով (ռեսուրսների օգտագործման մասով) հանրագումարը (ИСП_p) որոշվում է հետեւյալ բանաձեւով՝

$$\text{ИСП}_p = \text{ПП}_p + \text{ПД}_p + \text{ПО}_p + \text{ЛП}_p + \text{ВВ}_p + \text{Э}_p,$$

որտեղ՝

ПП_p-ն՝ պարենային նպատակով բուսական յուղերի վերամշակումն է.

ПД_p-ն՝ ոչ սննդային նպատակներով բուսական յուղերի վերամշակումը.

ПО_p-ն՝ բուսական յուղերի կորուստները.

ЛП_p-ն՝ բուսական յուղերի անձնական սպառումը.

ВВ_p-ն՝ անդամ պետություններ բուսական յուղերի դուրսբերումը.

Э_p-ն՝ բուսական յուղերի արտահանումը (արտաքին առևտուր):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

8. Պաշարներ՝ տարվա վերջում

8-րդ դիրքը ներառում է արտադրող ձեռնարկություններում, մեծածախ եւ մանրածախ առետրի կազմակերպություններում բուսական յուղերի պաշարների մասով տվյալները:

Տարվա վերջում բուսական յուղերի պաշարների կանխատեսումը հաշվարկվում է՝ հաշվի առնելով՝

անդամ պետությունում բուսական յուղերի կանխատեսվող ռեսուրսները եւ դրանց ներքին օգտագործումը:

սպառողական շուկայում բուսական յուղերի անհրաժեշտ պաշարների եւ սննդաարդյունաբերական ձեռնարկություններում հումքի տեխնոլոգիական պաշարների ձեւավորումը:

VII. Կարտոֆիլի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռը

Կարտոֆիլի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռն արտացոլում է կանխատեսվող ռեսուրսները՝ ըստ կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ստացման աղբյուրների ու օգտագործման ուղղությունների (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0701, 0710 10 000 0, 0712 90 050 0, 1105, 1108 13 000 0, 2004 10 եւ 2005 20 ծածկագրեր), ըստ սույն մեթոդաբանության թիվ 4 հավելվածում նշված համապատասխան գործակիցների՝ կարտոֆիլի վերահաշվարկով:

Հաշվետու տարվա համար տվյալները հաշվարկվում են անդամ պետությունների պետական վիճակագրական մարմինների (ծառայությունների) կողմից հաստատվող մեթոդիկաներին համապատասխան՝ բացառությամբ «Ներսբերում» եւ «Դուրսբերում» ցուցանիշների (3-րդ եւ 6-րդ դիրքեր): Տվյալ ցուցանիշները հաշվարկվում են ըստ սույն մեթոդաբանության թիվ 4 հավելվածում նշված համապատասխան գործակիցների:

Կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի ռեսուրսային մասը (ռեսուրսները) ներառում է հետևյալ դիրքերը՝

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

1. Պաշարներ՝ տարվա սկզբին

1-ին դիրքը ներառում է գյուղատնտեսական արտադրողների մոտ (գյուղատնտեսական կազմակերպություններում, գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում եւ բնակչության տնտեսություններում), արտադրող ձեռնարկություններում, մեծածախ եւ մանրածախ առևտրի կազմակերպություններում կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի պաշարների մասով տվյալները:

Տարվա սկզբին կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի պաշարների մասով տվյալները տեղափոխվում են 8-րդ դիրքից (համապատասխան նախորդ տարվա սյունակից):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

2. Արտադրություն

Կարտոֆիլի արտադրության ծավալում (2-րդ դիրք) ներառվում է բոլոր կատեգորիաների տնտեսություններում կարտոֆիլի համախառն բերքը՝

գյուղատնտեսական կազմակերպություններում.

գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում. բնակչության տնտեսություններում:

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար կարտոֆիլի համախառն բերքի ցուցանիշները որոշվում են անդամ պետությունների՝

գյուղատնտեսության զարգացման պետական ծրագրերի եւ բուսաբուծության զարգացման ոլորտային ծրագրերի հետ փոխկապակցված գերատեսչական կանխատեսումներին համապատասխան: Գերատեսչական կանխատեսումները կարող են՝

ներառել կանխատեսումային տվյալներ ցանքատարածությունների, բերքատվության (ցանքատարածության մեկ հեկտարի հաշվարկով) եւ կարտոֆիլի համախառն բերքի մասին.

որոշել կարտոֆիլի կանխատեսվող համախառն բերքը (Π_k) հետեւյալ բանաձեւով՝

$$\Pi_k = P_k \times Y_k,$$

որտեղ՝

P_k -ն կարտոֆիլի պլանավորվող ցանքատարածությունն է.

Y_k -ն՝ կարտոֆիլի կանխատեսվող բերքատվությունը:

Կարտոֆիլի ցանքատարածությունների կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

գյուղատնտեսական մշակաբույսերի պլանավորվող ցանքաշրջանառությունը. հողատեսքերի ենթադրվող ձեւափոխումը, այդ թվում՝ խամահողերի հերկման հաշվին.

դիտարկվող ժամանակահատվածում իրականացվող՝ կարտոֆիլի արտադրության զարգացման մասով խոշոր ներդրումային ծրագրերը.

կարտոֆիլի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան:

Համապատասխան գերատեսչական կանխատեսումների բացակայության դեպքում կարտոֆիլի բերքատվության ցուցանիշները կանխատեսվում են նախորդ տարիների համար տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների կիրառմամբ:

Կարտոֆիլի բերքատվության կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաև հետևյալ գործոնները՝

կարտոֆիլի տնկանյութի որակը. պարարտանյութերի կիրառման պլանավորվող մակարդակը. կարտոֆիլի աճեցման ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրումը:

Կանխատեսումային գնահատումների ճշգրտությունը բարձրացնելու նպատակով կարտոֆիլի համախառն բերքի հաշվարկը կարող է կատարվել առանձին՝ ըստ տնտեսության յուրաքանչյուր կատեգորիայի (հետագա գումարմամբ)՝ գյուղատնտեսական կազմակերպություններում, գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում եւ բնակչության տնտեսություններում:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվության տարի)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	---------------------------	----------------	--------------------	--------------------

3. Ներսերում՝ ընդամենը

այդ թվում՝

փոխադարձ առևտուր՝ ընդամենը

այդ թվում՝ անդամ պետություններից՝

...

արտաքին առևտուր (ներմուծում)

3-րդ դիրքն արտացոլում է կարտոֆիլի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներսերման ընդհանուր ծավալը, այդ թվում՝ անդամ պետություններից (փոխադարձ առևտուր), եւ կարտոֆիլի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներմուծման մատակարարումները երրորդ երկրներից (արտաքին առևտուր):

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներսերման ցուցանիշները (OB*) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$OB_k = \sum_k B_{kk} + I_k,$$

որտեղ՝

B_{kk} -ն k անդամ պետությունից կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներսերման կանխատեսումն է.

I_k -ն՝ կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներմուծումը (արտաքին առևտուր):

Անդամ պետություններից կարտոֆիլի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներսերման եւ կարտոֆիլի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներմուծման մատակարարումների կանխատեսումները կարող են որոշվել նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների օգնությամբ: Տվյալ կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

անդամ պետության՝ կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի կանխատեսվող պահանջումները.

կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան՝ ներառյալ ազգային շուկայում եւ կարտոֆիլի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի հիմնական մատակարար պետություններում կարտոֆիլի գների հարաբերակցությունը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

4. Ընդամենը ռեսուրսներ

Կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի ռեսուրսային մասով (ռեսուրսների մասով) հանրագումարը (Pec_k) որոշվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Pec_k = 3H_k + \Pi_k + B_k + I_k,$$

որտեղ՝

ՅԻԿ-ն տարվա սկզբին կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի պաշարներն են.

ՈԿ-ն՝ կարտոֆիլի արտադրությունը.

ԵԿ-ն՝ անդամ պետություններից կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներաբերումը.

ԻԿ-ն՝ կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներմուծումը (արտաքին առևտուր):

Կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի բաշխիչ մասը (ռեսուրսների օգտագործումը) ներառում է հետևյալ դիրքերը՝

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվո թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	-----------------------------	-------------------	---------------------------	---------------------------

- 5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
այդ թվում՝
 - արտադրական սպառում՝ ընդամենը
այդ թվում՝
 - սերմերի համար

5-րդ դիրքը ներառում է կարտոֆիլի՝ արտադրական սպառման մասով ծախսման, կորուստների եւ անձնական սպառման վերաբերյալ տվյալները:

5-րդ դիրքի «սերմերի համար» ստորաենթադիրքն արտացոլում է բոլոր կատեգորիաների տնտեսություններում գյուղատնտեսական արտադրողների մոտ սերմերի համար կարտոֆիլի ծախսման մասով տվյալները:

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար սերմերի համար կարտոֆիլի ծախսման ցուցանիշները որոշվում են այն գերատեսչական կանխատեսումներին համապատասխան, որոնցում տվյալ ցուցանիշը հաշվարկվում է որպես կարտոֆիլի պլանավորվող ցանքատարածության եւ ցանքի նորմայի արտադրյալ:

Համապատասխան գերատեսչական կանխատեսումների բացակայության դեպքում սերմերի համար՝ ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար կարտոֆիլի ծախսման ցուցանիշները (C_k) որոշվում են հետեւյալ բանաձեւով՝

$$C_k = P_k \times q_k,$$

որտեղ՝

P_k -ն կարտոֆիլի պլանավորվող ցանքատարածությունն է.

q_k -ն՝ ցանքի միջին նորման, որը սահմանվում է որպես սերմերի համար ծախսված կարտոֆիլի՝ կարտոֆիլի ցանքատարածության նկատմամբ հարաբերության վերջին 3 տարվա միջին արժեք:

Կարտոֆիլի ցանքատարածությունները կանխատեսվում են՝ հաշվի առնելով այն գործոնները, որոնք նշվում են մսի արտադրության ծավալների կանխատեսումները դիտարկելիս:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
այդ թվում՝
արտադրական սպառում՝ ընդամենը
այդ թվում՝
անասնակերի եւ թռչնակերի համար

5-րդ դիրքի «անասնակերի եւ թռչնակերի համար» ստորաենթադիրքն արտացոլում է բոլոր կատեգորիաների տնտեսություններում գյուղատնտեսական արտադրողների մոտ անասնակերի եւ թռչնակերի համար կարտոֆիլի ծախսման մասով տվյալները:

Անասնակերի եւ թռչնակերի համար կարտոֆիլի արտադրական սպառման կանխատեսումը կարող է հաշվարկվել նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների օգնությամբ:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
այդ թվում՝
արտադրական սպառում՝ ընդամենը
այդ թվում՝
ոչ սննդային նպատակով վերամշակում

5-րդ դիրքի «ոչ սննդային նպատակով վերամշակում» ստորաենթադիրքը ներառում է սպիրտի եւ այլ ոչ սննդային արտադրանքի արտադրության համար արտադրող ձեռնարկությունների կողմից վերամշակվող կարտոֆիլի մասով տվյալները:

Ոչ սննդային նպատակով կարտոֆիլի վերամշակման ծավալների կանխատեսումը կատարվում է նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների կիրառմամբ: Տվյալ կանխատեսումային ցուցանիշը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

վերամշակող ձեռնարկությունների հզորությունների առկայությունը եւ ծանրաբեռնվածությունը.

դիտարկվող ժամանակահատվածում նոր վերամշակող ձեռնարկությունների ստեղծման եւ գործող ձեռնարկությունների զարգացման մասով ներդրումային ծրագրերը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
այդ թվում՝
կորուստներ

5-րդ դիրքի «կորուստներ» ենթադիրքը ներառում է արտադրությունից մինչև իրացում բոլոր փուլերում կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի կորուստների մասով տվյալները (գյուղատնտեսական արտադրողների, արտադրող ձեռնարկությունների, մեծածախ եւ մանրածախ առեւտրի կազմակերպությունների կորուստների մասով):

Կորուստների կանխատեսումը հաշվարկվում է՝ հաշվի առնելով վերջին 3 տարվա համար ռեսուրսներում դրանց միջին տեսակարար կշիռը եւ կարտոֆիլի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի կորուստների կրճատմանն ուղղված՝ անդամ պետությունների պլանավորվող միջոցառումները:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	--------------------------	-------------------	-----------------------	-----------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
այդ թվում՝
անձնական սպառում

Անձնական սպառման ֆոնդի կազմում (5-րդ դիրքի «անձնական սպառում» ենթադիրք) ներառվում են կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի մասով տվյալները:

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի անձնական սպառման ցուցանիշները որոշվում են անդամ պետությունների գյուղատնտեսության զարգացման պետական ծրագրերի հետ փոխկապակցված գերատեսչական կանխատեսումներին համապատասխան: Գերատեսչական կանխատեսումները կարող են որոշել անդամ պետության բնակչության կողմից կարտոֆիլի եւ կարտոֆիլի վերամշակումից ստացվող արտադրանքի սպառման կանխատեսվող ծավալը ($ЛП_k$) հետեւյալ բանաձեւով՝

$$ЛП_k = СП_k \times \Psi,$$

որտեղ՝

СПк-ն անդամ պետության բնակչության կողմից կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի մեկ շնչին ընկնող՝ կանխատեսվող միջին սպառումն է.

Կ-ն՝ անդամ պետության բնակչության թվաքանակի կանխատեսումը:

Համապատասխան գերատեսչական կանխատեսումների բացակայության դեպքում անդամ պետության բնակչության կողմից ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի անձնական սպառման ցուցանիշները որոշվում են հետեւյալ հաշվարկային եւ փորձագիտական մեթոդների օգնությամբ՝

անդամ պետության բնակչության կողմից կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի մեկ շնչին ընկնող միջին սպառումը կանխատեսվում է անդամ պետության բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտներից կախվածության հիման վրա՝ սույն մեթոդաբանության թիվ 3 հավելվածում նշված մեթոդների կիրառմամբ.

ընթացիկ տարվա եւ հաջորդ 2 տարիների համար անդամ պետության բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտներն ընդունվում են անդամ պետության սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսումներին համապատասխան.

ընթացիկ տարվա եւ 2 հաջորդ տարիների համար անդամ պետության բնակչության թվաքանակն ընդունվում է անդամ պետության ժողովրդագրական կանխատեսումներին համապատասխան:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
6. Դուրսբերում՝ ընդամենը այդ թվում՝ փոխադարձ առեւտուր՝ ընդամենը այդ թվում՝ անդամ պետություններ՝ _____ _____ ... արտաքին առեւտուր (արտահանում)				

6-րդ դիրքն արտացոլում է կարտոֆիլի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի դուրսբերման ընդհանուր ծավալը, այդ թվում՝ անդամ պետություններ (փոխադարձ առևտուր), եւ կարտոֆիլի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի արտահանման մատակարարումները երրորդ երկրներ (արտաքին առևտուր):

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի դուրսբերման ցուցանիշները (OBB_k) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$OBB_k = \sum_k BB_{kk} + \Theta_k,$$

որտեղ՝

BB_{kk}-ն անդամ պետություն կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի դուրսբերման կանխատեսումն է.

Θ_k-ն՝ կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի արտահանումը (արտաքին առևտուր):

Անդամ պետություններ կարտոֆիլի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի դուրսբերման եւ կարտոֆիլի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի արտահանման մատակարարումների կանխատեսումները կարող են որոշվել նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների կիրառմամբ: Տվյալ կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետևյալ գործոնները՝

անդամ պետությունում կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի կանխատեսվող ռեսուրսները եւ դրանց ներքին օգտագործումը.

կարտոֆիլի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան՝ ներառյալ ազգային շուկայում եւ կարտոֆիլի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի հիմնական սպառող պետություններում կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի գների հարաբերակցությունը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվութ յուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

7. Ընդամենը օգտագործում

Կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի բաշխիչ մասով (ռեսուրսների օգտագործման մասով) հանրագումարը ($ИСП_K$) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$ИСП_K = C_K + K_K + ПД_K + ПО_K + ЛП_K + ВВ_K + Э_K,$$

որտեղ՝

C_K -ն սերմերի համար կարտոֆիլի արտադրական սպառումն է.

K_K -ն՝ անասնակերի եւ թռչնակերի համար կարտոֆիլի արտադրական սպառումը.

$ПД_K$ -ն՝ ոչ սննդային նպատակով կարտոֆիլի վերամշակումը.

$ПО_K$ -ն՝ կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի կորուստները.

$ЛП_K$ -ն՝ կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի անձնական սպառումը.

$ВВ_K$ -ն՝ անդամ պետություններ կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի դուրսբերումը.

$Э_K$ -ն՝ կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի արտահանումը (արտաքին առևտուր):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվութ յուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

8. Պաշարներ՝ տարվա վերջում

8-րդ դիրքը ներառում է գյուղատնտեսական արտադրողների մոտ, արտադրող ձեռնարկություններում, մեծածախ եւ մանրածախ առևտրի կազմակերպություններում կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի պաշարների մասով տվյալները:

Տարվա վերջում կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի պաշարների կանխատեսումը հաշվարկվում է՝ հաշվի առնելով՝

անդամ պետությունում կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի կանխատեսվող ռեսուրսները ու դրանց ներքին օգտագործումը.

մինչև հաջորդ տարվա բերքը կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջմունքի բավարարման համար կարտոֆիլի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի անհրաժեշտ պաշարների ձեւավորումը.

կարտոֆիլի պահման համար անդամ պետությունում հզորությունների առկայության եւ զարգացման մասին տվյալները:

VIII. Չվի եւ ձվամթերքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռը

Չվի ու ձվամթերքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռը ներառում է բոլոր տեսակի ձվերը՝ քանակական արտահայտությամբ (մլն հատ), եւ ձվամթերքը (ԵՍՏՄ ԱՏԳ Ա.Ա. 0407 եւ 0408 ծածկագրեր)՝ ըստ սույն մեթոդաբանության թիվ 4 հավելվածում նշված համապատասխան գործակիցների՝ ձվի վերահաշվարկով՝ քանակական արտահայտությամբ:

Հաշվետու տարվա համար տվյալները հաշվարկվում են անդամ պետությունների պետական վիճակագրական մարմինների (ծառայությունների) կողմից հաստատվող մեթոդիկաներին համապատասխան՝ բացառությամբ «Ներսբերում» եւ «Դուրսբերում» ցուցանիշների (3-րդ եւ 6-րդ դիրքեր): Տվյալ ցուցանիշները հաշվարկվում են ըստ սույն մեթոդաբանության թիվ 4 հավելվածում նշված համապատասխան գործակիցների:

Չվի եւ ձվամթերքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի ռեսուրսային մասը (ռեսուրսները) ներառում է հետեւյալ դիրքերը՝

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

1. Պաշարներ՝ տարվա սկզբին

1-ին դիրքը ներառում է գյուղատնտեսական արտադրողների մոտ (գյուղատնտեսական կազմակերպություններում, գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում եւ բնակչության տնտեսություններում), արտադրող ձեռնարկություններում, մեծածախ եւ մանրածախ առևտրի կազմակերպություններում ձվի եւ ձվամթերքի պաշարների մասով տվյալները:

Տարվա սկզբին ձվի եւ ձվամթերքի պաշարների մասով տվյալները տեղափոխվում են 8-րդ դիրքից (համապատասխան նախորդ տարվա սյունակից):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

2. Արտադրություն

Չվի արտադրության ծավալում (2-րդ դիրք) ներառվում է ձվի արտադրությունը բոլոր կատեգորիաների տնտեսություններում՝

գյուղատնտեսական կազմակերպություններում.

գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում.

բնակչության տնտեսություններում:

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար ձվի արտադրության ցուցանիշները որոշվում են անդամ պետությունների՝ գյուղատնտեսության զարգացման պետական ծրագրերի եւ անասնաբուծության զարգացման ոլորտային ծրագրերի հետ փոխկապակցված գերատեսչական կանխատեսումներին համապատասխան: Գերատեսչական կանխատեսումները կարող են՝

ներառել հավերի տարեկան միջին գլխաքանակի, մթերատվության (մեկ ածան հավի միջին ձվատվություն) եւ ձվի արտադրության մասին կանխատեսումային տվյալները.

որոշել ձվի արտադրության կանխատեսվող ծավալը (Π_x) հետեւյալ բանաձեւով՝

$$\Pi_x = M_x \times v + \pi_x,$$

որտեղ՝

M_x -ն հավերի պլանավորվող տարեկան միջին գլխաքանակն է.

v -ն՝ մեկ ածան հավի միջին ձվատվությունը.

π_x -ն՝ այլ տեսակի թռչունների ձվի արտադրությունը:

Համապատասխան գերատեսչական կանխատեսումների բացակայության դեպքում հավերի տարեկան միջին գլխաքանակի ցուցանիշները կանխատեսվում են նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների օգնությամբ: Տվյալ կանխատեսումային ցուցանիշները հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

թռչնաբուծության կերային բազայի ընթացիկ եւ կանխատեսվող վիճակը.

դիտարկվող ժամանակահատվածում իրականացվող՝ թռչնաբուծության զարգացման մասով խոշոր ներդրումային ծրագրերը:

Մթերատվության ցուցանիշները (մեկ ածան հավի միջին ձվատվություն) կարող են սահմանվել որպէս վերջին 3 տարվա համար միջին արժեքներ եւ ճշգրտվել՝ հաշվի առնելով թռչնաբուծության արդյունավետության բարձրացմանն ուղղված անդամ պետությունների պլանավորվող միջոցառումները:

Ձվի արտադրության կանխատեսումային ծավալներում հաշվի է առնվում այլ տեսակի թռչունների ձվերի արտադրությունը:

Կանխատեսումային գնահատումների ճշգրտությունը բարձրացնելու նպատակով ձվի արտադրության հաշվարկը կարող է կատարվել առանձին՝ ըստ տնտեսության յուրաքանչյուր կատեգորիայի (հետագա գումարմամբ)՝ գյուղատնտեսական կազմակերպություններում, գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում եւ բնակչության տնտեսություններում:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

3. Ներսերում՝ ընդամենը
 այդ թվում՝
 փոխադարձ առևտուր՝ ընդամենը
 այդ թվում՝ անդամ պետություններից՝

 ...
 արտաքին առևտուր (ներմուծում)

3-րդ դիրքն արտացոլում է ձվի եւ ձվամթերքի ներսերման ընդհանուր ծավալը, այդ թվում՝ անդամ պետություններից (փոխադարձ առևտուր), եւ ձվի ու ձվամթերքի ներմուծման մատակարարումները երրորդ երկրներից (արտաքին առևտուր):

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար ձվի եւ ձվամթերքի ներսերման ցուցանիշները (OB_{π}) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$OB_{\pi} = \sum_k B_{\pi k} + И_{\pi},$$

որտեղ՝

$B_{\pi k}$ -ն k անդամ պետությունից ձվի եւ ձվամթերքի ներսերման կանխատեսումն է.

$И_{\pi}$ -ն՝ ձվի եւ ձվամթերքի ներմուծումը (արտաքին առևտուր):

Անդամ պետություններից ձվի եւ ձվամթերքի ներսերման եւ ձվի ու ձվամթերքի ներմուծման մատակարարումների կանխատեսումները կարող են

որոշվել նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների օգնությամբ: Տվյալ կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ անդամ պետության՝ ձվի եւ ձվամթերքի կանխատեսվող պահանջումները:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվության)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	----------------------	----------------	--------------------	--------------------

4. Ընդամենը ռեսուրսներ

Ձվի եւ ձվամթերքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի ռեսուրսային մասով (ռեսուրսների մասով) հանրագումարը (Pec_n) որոշվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Pec_n = 3H_n + \Pi_n + B_n + I_n,$$

որտեղ՝

$3H_n$ -ն ձվի ու ձվամթերքի պաշարներն են (տարվա սկզբին).

Π_n -ն՝ բոլոր տեսակի ձվերի արտադրությունը.

B_n -ն՝ ձվի եւ ձվամթերքի ներսերումը անդամ պետություններից.

I_n -ն՝ ձվի եւ ձվամթերքի ներմուծումը (արտաքին առեստուր):

Ձվի եւ ձվամթերքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի բաշխիչ մասը (ռեսուրսների օգտագործումը) ներառում է հետեւյալ դիրքերը՝

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվության)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	----------------------	----------------	--------------------	--------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը

այդ թվում՝

արտադրական սպառում՝ ընդամենը

այդ թվում՝

գյուղատնտեսությունում

5-րդ դիրքի «գյուղատնտեսությունում» ստորաենթադիրքն արտացոլում է գյուղատնտեսական արտադրողների մոտ՝ կերի եւ ինկուբացիայի համար ձվի ծախսման մասով տվյալները:

Ձվի արտադրական սպառման կանխատեսումը կարող է հաշվարկվել նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների օգնությամբ:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
այդ թվում՝
արտադրական սպառում՝ ընդամենը
այդ թվում՝
ոչ սննդային նպատակով վերամշակում

5-րդ դիրքի «ոչ սննդային նպատակով վերամշակում» ստորաենթադիրքն արտացոլում է ոչ սննդային արտադրանքի արտադրության համար վերամշակվող ձվի մասով տվյալները:

Ոչ սննդային նպատակով ձվի վերամշակման ծավալների կանխատեսումը կատարվում է նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների կիրառմամբ: Տվյալ կանխատեսումային ցուցանիշը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

վերամշակող ձեռնարկությունների հզորությունների առկայությունը եւ ծանրաբեռնվածությունը.

դիտարկվող ժամանակահատվածում նոր վերամշակող ձեռնարկությունների ստեղծման եւ գործող ձեռնարկությունների զարգացման մասով ներդրումային ծրագրերը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
այդ թվում՝
կորուստներ

5-րդ դիրքի «կորուստներ» ենթադիրքն արտացոլում է արտադրությունից մինչև իրացում բոլոր փուլերում ձվի և ձվամթերքի կորուստների մասով տվյալները (գյուղատնտեսական արտադրողների, արտադրող ձեռնարկությունների, մեծածախ և մանրածախ առևտրի կազմակերպությունների կորուստների մասով):

Կորուստների կանխատեսումը հաշվարկվում է՝ հաշվի առնելով վերջին 3 տարվա համար ռեսուրսներում դրանց միջին տեսակարար կշիռը և ձվի ու ձվամթերքի կորուստների կրճատմանն ուղղված՝ անդամ պետությունների պլանավորվող միջոցառումները:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
այդ թվում՝
անձնական սպառում

Անձնական սպառման ֆոնդի կազմում (5-րդ դիրքի «անձնական սպառում» ենթադիրք) ներառվում են ձվի և ձվամթերքի մասով տվյալները:

Ընթացիկ տարվա և 2 կանխատեսումային տարիների համար ձվի և ձվամթերքի անձնական սպառման ցուցանիշները որոշվում են անդամ պետությունների գյուղատնտեսության զարգացման պետական ծրագրերի հետ փոխկապակցված գերատեսչական կանխատեսումներին համապատասխան: Գերատեսչական կանխատեսումները կարող են որոշել անդամ պետության բնակչության կողմից ձվի և ձվամթերքի (ՄՄԶ) սպառման կանխատեսվող ծավալները հետեյալ բանաձևով՝

$$ЛПЯ = СПЯ \times \varphi,$$

որտեղ՝

СПЯ-ն անդամ պետության բնակչության կողմից ձվի եւ ձվամթերքի՝ մեկ շնչին ընկնող կանխատեսվող միջին սպառումն է.

Վ-ն՝ անդամ պետության բնակչության թվաքանակի կանխատեսումը:

Համապատասխան գերատեսչական կանխատեսումների բացակայության դեպքում ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար ձվի եւ ձվամթերքի անձնական սպառման ցուցանիշները որոշվում են հետեւյալ հաշվարկային եւ փորձագիտական մեթոդների կիրառմամբ՝

անդամ պետության բնակչության կողմից ձվի եւ ձվամթերքի՝ մեկ շնչին ընկնող միջին սպառումը կանխատեսվում է անդամ պետության բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտներից կախվածության հիման վրա՝ սույն մեթոդաբանության թիվ 3 հավելվածում նշված մեթոդների օգնությամբ.

ընթացիկ տարվա եւ հաջորդ 2 տարիների համար անդամ պետության բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտներն ընդունվում են անդամ պետության սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսումներին համապատասխան.

ընթացիկ տարվա եւ 2 հաջորդ տարվա համար անդամ պետության բնակչության թվաքանակն ընդունվում է անդամ պետության ժողովրդագրական կանխատեսումներին համապատասխան:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

6. Դուրսբերում՝ ընդամենը
այդ թվում՝
փոխադարձ առեստուր՝ ընդամենը
այդ թվում՝ անդամ պետություններ՝

...
արտաքին առեստուր (արտահանում)

6-րդ դիրքն արտացոլում է ձվի ու ձվամթերքի դուրսբերման ընդհանուր ծավալը, այդ թվում՝ անդամ պետություններ (փոխադարձ առեստուր), եւ ձվի ու ձվամթերքի արտահանման մատակարարումները երրորդ երկրներ (արտաքին առեստուր):

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար ձվի եւ ձվամթերքի դուրսբերման ցուցանիշները (OBB_n) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$OBB_n = \sum_k BB_{nk} + \Theta_n,$$

որտեղ՝

BB_{nk} -ն k անդամ պետություն ձվի եւ ձվամթերքի դուրսբերման կանխատեսումն է.

Θ_n -ն՝ ձվի եւ ձվամթերքի արտահանումը (արտաքին առեստուր):

Անդամ պետություններ ձվի ու ձվամթերքի դուրսբերման եւ ձվի ու ձվամթերքի արտահանման մատակարարումների կանխատեսումները կարող են որոշվել նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների օգնությամբ: Տվյալ կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ անդամ պետությունում՝ ձվի եւ ձվամթերքի կանխատեսվող ռեսուրսները եւ դրանց ներքին օգտագործումը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

7. Ընդամենը օգտագործում

Չվի եւ ձվամթերքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի բաշխիչ մասով (ռեսուրսների օգտագործման մասով) հանրագումարը (Исπ_я) որոշվում է հետեւյալ բանաձեւով՝

$$\text{Исп}_{\text{я}} = K_{\text{я}} + \text{ПД}_{\text{я}} + \text{ПО}_{\text{я}} + \text{ЛП}_{\text{я}} + \text{ВВ}_{\text{я}} + \text{Э}_{\text{я}},$$

որտեղ՝

$K_{\text{я}}$ -ն գյուղատնտեսությունում ձվի արտադրական սպառումն է.

$\text{ПД}_{\text{я}}$ -ն՝ ոչ սննդային նպատակով ձվի վերամշակումը.

$\text{ПО}_{\text{я}}$ -ն՝ ձվի եւ ձվամթերքի կորուստները.

$\text{ЛП}_{\text{я}}$ -ն՝ ձվի եւ ձվամթերքի անձնական սպառումը.

$\text{ВВ}_{\text{я}}$ -ն՝ ձվի եւ ձվամթերքի դուրսբերումը անդամ պետություններ.

$\text{Э}_{\text{я}}$ -ն՝ ձվի եւ ձվամթերքի արտահանումը (արտաքին առևտուր):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

8. Պաշարներ՝ տարվա վերջում

8-րդ դիրքը ներառում է գյուղատնտեսական արտադրողների մոտ, արտադրող ձեռնարկություններում, մեծածախ եւ մանրածախ առևտրի կազմակերպություններում ձվի եւ ձվամթերքի պաշարների մասով տվյալները:

Տարվա վերջում ձվի եւ ձվամթերքի պաշարների կանխատեսումը հաշվարկվում է՝ հաշվի առնելով՝

անդամ պետությունում ձվի եւ ձվամթերքի կանխատեսվող ռեսուրսները եւ դրանց ներքին օգտագործումը.

սպառողական շուկայում ձվի եւ ձվամթերքի անհրաժեշտ պաշարների ձեւավորումը:

IX. Բանջարաբուստանային մշակաբույսերի ու դրանց վերամշակումից
ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի
կանխատեսումային հաշվեկշիռը

Բանջարաբուստանային մշակաբույսերի ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռն արտացոլում է կանխատեսվող ռեսուրսները՝ ըստ բանջարաբուստանային մշակաբույսերի ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի ստացման աղբյուրների եւ օգտագործման ուղղությունների (ԵՍՄ ԱՏԳ ԱԱ 0702 00 000, 0703, 0704, 0705, 0706, 0707 00, 0708, 0709, 0710, 0711, 0712, 0713, 0807, 2001, 2002, 2004, 2005, 2009 ծածկագրեր), ըստ սույն մեթոդաբանության թիվ 4 հավելվածում նշված համապատասխան գործակիցների՝ բանջարաբուստանային մշակաբույսերի ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի վերահաշվարկով:

Հաշվետու տարվա համար բանջարաբուստանային մշակաբույսերի ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի մասով տվյալները հաշվարկվում են անդամ պետությունների պետական վիճակագրական մարմինների (ծառայությունների) կողմից հաստատվող մեթոդիկաներին համապատասխան՝ բացառությամբ «Ներսերում» եւ «Դուրսերում» ցուցանիշների (3-րդ եւ 6-րդ դիրքեր): Տվյալ ցուցանիշները հաշվարկվում են ըստ սույն մեթոդաբանության թիվ 4 հավելվածում նշված համապատասխան գործակիցների:

Բանջարաբուստանային մշակաբույսերի ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռն ռեսուրսային մասը (ռեսուրսները) ներառում է հետեւյալ դիրքերը՝

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

1. Պաշարներ՝ տարվա սկզբին

1-ին դիրքը ներառում է գյուղատնտեսական արտադրողների մոտ (գյուղատնտեսական կազմակերպություններում, գյուղացիական (ֆերմերային)

տնտեսություններում եւ բնակչության տնտեսություններում), արտադրող ձեռնարկություններում եւ այլ կազմակերպություններում բանջարաբուստանային մշակաբույսերի պաշարների մասով տվյալները:

Տարվա սկզբին բանջարաբուստանային մշակաբույսերի պաշարների մասով տվյալները տեղափոխվում են 8-րդ դիրքից (համապատասխան նախորդ տարվա սյունակից):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

2. Արտադրություն

Բանջարաբուստանային մշակաբույսերի արտադրության ծավալում (2-րդ դիրք) ներառվում է բանջարաբուստանային մշակաբույսերի համախառն բերքը բոլոր կատեգորիաների տնտեսություններում՝

գյուղատնտեսական կազմակերպություններում.

գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում.

բնակչության տնտեսություններում:

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար բանջարաբուստանային մշակաբույսերի համախառն բերքի ցուցանիշները որոշվում են անդամ պետությունների՝ գյուղատնտեսության զարգացման պետական ծրագրերի եւ բուսաբուծության զարգացման ոլորտային ծրագրերի հետ փոխկապակցված գերատեսչական կանխատեսումներին համապատասխան: Գերատեսչական կանխատեսումները կարող են՝

պարունակել ըստ տեսակների բանջարաբուստանային մշակաբույսերի բերքի մասով ցուցանիշները.

ներառել բանջարաբուստանային մշակաբույսերի ցանքատարածությունների, բերքատվության եւ համախառն բերքի մասին կանխատեսումային տվյալները.

որոշել բանջարաբուստանային մշակաբույսերի կանխատեսվող համախառն բերքը (Π_0) հետևյալ բանաձևով՝

$$\Pi_0 = P_0 \times Y_0,$$

որտեղ՝

P_0 -ն բանջարաբուստանային մշակաբույսերի պլանավորվող ցանքատարածությունն է.

Y_0 -ն՝ բանջարաբուստանային մշակաբույսերի կանխատեսվող բերքատվությունը:

Բանջարաբուստանային մշակաբույսերի ցանքատարածությունների կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաև հետևյալ գործոնները՝

գյուղատնտեսական մշակաբույսերի պլանավորվող ցանքաշրջանառությունը.

հողատեսքերի ենթադրվող ձևափոխումը, այդ թվում՝ խամահողերի հերկման հաշվին.

դիտարկվող ժամանակահատվածում իրականացվող՝ բանջարաբուստանային մշակաբույսերի արտադրության զարգացման մասով խոշոր ներդրումային ծրագրերը.

բանջարաբուստանային մշակաբույսերի ազգային և համաշխարհային շուկաների կոնյունկտուրան:

Համապատասխան գերատեսչական կանխատեսումների բացակայության դեպքում բանջարաբուստանային մշակաբույսերի բերքատվության ցուցանիշները կանխատեսվում են նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների օգնությամբ: Բանջարաբուստանային մշակաբույսերի բերքատվության կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաև հետևյալ գործոնները՝

պարարտանյութերի կիրառման պլանավորվող մակարդակը.

բանջարաբուստանային մշակաբույսերի սերմերի որակը.

բուսաբուծության արտադրանքի աճեցման ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրումը:

Կանխատեսումային գնահատումների ճշգրտությունը բարձրացնելու նպատակով բանջարաբուստանային մշակաբույսերի համախառն բերքի հաշվարկը կարող է կատարվել առանձին՝ ըստ յուրաքանչյուր մշակաբույսի եւ տնտեսության կատեգորիայի (հետագա գումարմամբ)՝ գյուղատնտեսական կազմակերպություններում, գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում եւ բնակչության տնտեսություններում:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

3. Ներսերում՝ ընդամենը

այդ թվում՝

փոխադարձ առետուր՝ ընդամենը

այդ թվում՝ անդամ պետություններից՝

...

արտաքին առետուր (ներմուծում)

3-րդ դիրքն արտացոլում է բանջարաբուստանային մշակաբույսերի ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի ներսերման ընդհանուր ծավալը, այդ թվում՝ անդամ պետություններից (փոխադարձ առետուր), եւ բանջարաբուստանային մշակաբույսերի ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի ներմուծման մատակարարումները երրորդ երկրներից (արտաքին առետուր):

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների բանջարաբուստանային մշակաբույսերի ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի ներսերման ցուցանիշները (ՕԵ) որոշվում են հետեւյալ բանաձևով՝

$$OB_o = \sum_k B_{ok} + I_o,$$

որտեղ՝

B_{ok} -ն k անդամ պետությունից բանջարաբոստանային մշակաբույսերի ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի ներսերման կանխատեսումն է.

I_o -ն՝ բանջարաբոստանային մշակաբույսերի ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի ներմուծումը (արտաքին առևտուր):

Անդամ պետություններից բանջարաբոստանային մշակաբույսերի ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի ներսերման եւ բանջարաբոստանային մշակաբույսերի ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի ներմուծման մատակարարումների կանխատեսումները կարող են որոշվել նախորդ տարիների տվյալների հիման վրա՝ էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների կիրառմամբ: Տվյալ կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

անդամ պետության՝ բանջարաբոստանային մշակաբույսերի ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի կանխատեսվող պահանջումները.

բանջարաբոստանային մշակաբույսերի ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան՝ ներառյալ ազգային շուկայում եւ բանջարաբոստանային մշակաբույսերի ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի հիմնական մատակարար պետություններում բանջարաբոստանային մշակաբույսերի ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի գների հարաբերակցությունը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

4. Ընդամենը ռեսուրսներ

Բանջարաբուստանային մշակաբույսերի ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի ռեսուրսային մասով (ռեսուրսների մասով) հանրագումարը (Pec₀) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Pec_0 = 3H_0 + \Pi_0 + B_0 + И_0,$$

որտեղ՝

3H₀-ն տարվա սկզբին բանջարաբուստանային մշակաբույսերի պաշարներն են.

Π₀-ն՝ բանջարաբուստանային մշակաբույսերի արտադրությունը.

B₀-ն՝ անդամ պետություններից բանջարաբուստանային մշակաբույսերի եւ դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի ներսերումը.

И₀-ն՝ բանջարաբուստանային մշակաբույսերի ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի ներմուծումը (արտաքին առևտուր):

Բանջարաբուստանային մշակաբույսերի ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի բաշխիչ մասը (ռեսուրսների օգտագործումը) ներառում է հետևյալ դիրքերը՝

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվության թիվ)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	--------------------------	----------------	--------------------	--------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
 - այդ թվում՝
 - պարենային նպատակով վերամշակում
 - կորուստներ
 - անձնական սպառում

5-րդ դիրքը ներառում է պարենային նպատակով վերամշակման համար բանջարաբուստանային մշակաբույսերի ծախսման մասով տվյալները, կորուստների եւ անձնական սպառման մասով տվյալները:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
այդ թվում՝
պարենային նպատակով վերամշակում

5-րդ դիրքի «կորուստներ» ենթադիրքը ներառում է արտադրությունից մինչև իրացում բոլոր փուլերում բանջարաբուստանային մշակաբույսերի կորուստների մասով տվյալները (գյուղատնտեսական արտադրողների, արտադրող ձեռնարկությունների, առևտրի կազմակերպությունների եւ այլ կազմակերպությունների կորուստների մասով):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
այդ թվում՝
կորուստներ

Կորուստների կանխատեսումը հաշվարկվում է՝ հաշվի առնելով վերջին 3 տարվա համար ռեսուրսներում դրանց միջին տեսակարար կշիռը եւ բանջարաբուստանային մշակաբույսերի կորուստների կրճատմանն ուղղված՝ անդամ պետությունների պլանավորվող միջոցառումները:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
այդ թվում՝
անձնական սպառում

Անձնական սպառման ֆոնդի կազմը (5-րդ դիրքի «անձնական սպառում» ենթադիրք) ներառում է այն բանջարաբուստանային մշակաբույսերի մասով

տվյալները, որոնք տնային տնտեսություններում ստացվում են հում տեսքով, եւ չի ներառում վերամշակված տեսքով սպառվող բանջարաբոստանային մշակաբույսերի մասով տվյալները:

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար բանջարաբոստանային մշակաբույսերի անձնական սպառման ցուցանիշները կարող են սահմանվել որպէս վերջին 3 տարվա համար միջին արժեք:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվութ յուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատես ում)	տարի (կանխատես ում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

6. Դուրսբերում՝ ընդամենը
 այդ թվում՝
 փոխադարձ առեւտուր՝ ընդամենը
 այդ թվում՝ անդամ պետություններ՝

 ...
 արտաքին առեւտուր (արտահանում)

6-րդ դիրքն արտացոլում է բանջարաբոստանային մշակաբույսերի եւ դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի դուրսբերման ընդհանուր ծավալը, այդ թվում՝ անդամ պետություններ (փոխադարձ առեւտուր), եւ բանջարաբոստանային մշակաբույսերի ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի արտահանման մատակարարումները երրորդ երկրներ (արտաքին առեւտուր):

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար բանջարաբոստանային մշակաբույսերի եւ դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի դուրսբերման ցուցանիշները (OBB_o) որոշվում են հետևյալ բանաձեւով՝

$$OBB_o = \sum_k BB_{ok} + \Xi_o,$$

որտեղ՝

BBok-ն k անդամ պետություն բանջարաբուստանային մշակաբույսերի եւ դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի դուրսբերման կանխատեսումն է.

Ձօ-ն՝ բանջարաբուստանային մշակաբույսերի ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի արտահանումը (արտաքին առևտուր):

Անդամ պետություններ բանջարաբուստանային մշակաբույսերի եւ դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի դուրսբերման եւ բանջարաբուստանային մշակաբույսերի ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի արտահանման մատակարարումների կանխատեսումները կարող են որոշվել նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների կիրառմամբ: Տվյալ կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում հետեւյալ գործոնները՝

բանջարաբուստանային մշակաբույսերի եւ դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի կանխատեսվող ռեսուրսները ու դրանց ներքին օգտագործումը.

բանջարաբուստանային մշակաբույսերի ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան՝ ներառյալ ազգային շուկայում եւ բանջարաբուստանային մշակաբույսերի ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի հիմնական սպառող պետություններում բանջարաբուստանային մշակաբույսերի ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի գների հարաբերակցությունը.

բանջարաբուստանային մշակաբույսերի եւ դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի արտահանմանը վերաբերող՝ անդամ պետությունների օրենսդրության ենթադրվող փոփոխությունները (մաքսատուրքերի չափերի փոփոխություններ, էմբարգոյի սահմանում եւ այլ փոփոխություններ):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

7. Ընդամենը օգտագործում

Բանջարաբուստանային մշակաբույսերի եւ դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի բաշխիչ մասով (ռեսուրսների օգտագործման մասով) հանրագումարը (Исπз) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Исπ}_0 = K_0 + \text{ΠO}_0 + \text{ЛΠ}_0 + \text{BB}_0 + \text{Э}_0,$$

որտեղ՝

K_0 -ն անասնակերի եւ թռչնակերի համար բանջարաբուստանային մշակաբույսերի արտադրական սպառումն է.

ΠO_0 -ն՝ բանջարաբուստանային մշակաբույսերի կորուստները.

ЛΠ_0 -ն՝ բանջարաբուստանային մշակաբույսերի անձնական սպառումը.

BB_0 -ն՝ անդամ պետություններ բանջարաբուստանային մշակաբույսերի եւ դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի դուրսբերումը.

Э_0 -ն՝ բանջարաբուստանային մշակաբույսերի ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի արտահանումը (արտաքին առևտուր):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

8. Պաշարներ՝ տարվա վերջում

8-րդ դիրքը ներառում է գյուղատնտեսական արտադրողների, առևտրի ձեռնարկությունների եւ այլ կազմակերպությունների բանջարաբուստանային մշակաբույսերի պաշարների մասով տվյալները:

Տարվա վերջում բանջարաբուստանային մշակաբույսերի պաշարների կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում հետևյալ գործոնները՝

բանջարաբուստանային մշակաբույսերի կանխատեսվող ռեսուրսները եւ դրանց ներքին օգտագործումը.

մինչև հաջորդ տարվա բերքը բանջարաբուստանային մշակաբույսերի պահանջմունքի բավարարման համար պաշարների անհրաժեշտ ծավալների ձևավորումը.

բանջարաբուստանային մշակաբույսերի ազգային և համաշխարհային շուկաների կոնյունկտուրան՝ ներառյալ ազգային շուկայում և բանջարաբուստանային մշակաբույսերի հիմնական սպառող պետություններում բանջարաբուստանային մշակաբույսերի գների հարաբերակցությունը.

պահեստային տնտեսության հզորությունների առկայության և զարգացման մասին տվյալները:

X. Մրգերի և հատապտուղների, ինչպես նաև դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի և առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռը

Մրգերի և հատապտուղների, ինչպես նաև դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի և առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռն արտացոլում է կանխատեսվող ռեսուրսները՝ ըստ մրգերի և հատապտուղների ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի ստացման աղբյուրների և օգտագործման ուղղությունների (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0801, 0802, 0803, 0804, 0805, 0806, 0808, 0809, 0810, 0811, 0812, 0813, 2001 90 910 0, 2006 00, 2007, 2008 և 2009 ծածկագրեր), ըստ սույն մեթոդաբանության թիվ 4 հավելվածում նշված համապատասխան գործակիցների՝ հում մրգերի և հատապտուղների վերահաշվարկով:

Հաշվետու տարվա համար մրգերի և հատապտուղների, ինչպես նաև դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի մասով տվյալները հաշվարկվում են անդամ պետությունների պետական վիճակագրական մարմինների (ծառայությունների) կողմից հաստատվող մեթոդիկաներին համապատասխան՝

բացառությամբ «Ներսերում» եւ «Դուրսերում» ցուցանիշների (3-րդ եւ 6-րդ դիրքեր): Տվյալ ցուցանիշները հաշվարկվում են ըստ սույն մեթոդաբանության թիվ 4 հավելվածում նշված համապատասխան գործակիցների:

Մրգերի եւ հատապտուղների, ինչպես նաեւ դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի ռեսուրսային մասը (ռեսուրսները) ներառում է հետեւյալ դիրքերը՝

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

1. Պաշարներ՝ տարվա սկզբին

1-ին դիրքը ներառում է գյուղատնտեսական արտադրողների մոտ (գյուղատնտեսական կազմակերպություններում, գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում եւ բնակչության տնտեսություններում), արտադրող ձեռնարկություններում եւ այլ կազմակերպություններում մրգերի եւ հատապտուղների պաշարների մասով տվյալները:

Տարվա սկզբին մրգերի եւ հատապտուղների պաշարների մասով տվյալները տեղափոխվում են 8-րդ դիրքից (համապատասխան նախորդ տարվա սյունակից):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

2. Արտադրություն

Մրգերի եւ հատապտուղների արտադրության ծավալում (2-րդ դիրք) ներառվում է մրգերի եւ հատապտուղների համախառն բերքը բոլոր կատեգորիաների տնտեսություններում՝

- գյուղատնտեսական կազմակերպություններում,
- գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում,
- բնակչության տնտեսություններում:

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար մրգերի եւ հատապտուղների համախառն բերքի ցուցանիշները որոշվում են անդամ պետությունների՝ գյուղատնտեսության զարգացման պետական ծրագրերի եւ բուսաբուծության զարգացման ոլորտային ծրագրերի հետ փոխկապակցված գերատեսչական կանխատեսումներին համապատասխան: Գերատեսչական կանխատեսումները կարող են՝

պարունակել մրգերի եւ հատապտուղների բերքահավաքի ծավալների ցուցանիշները.

ներառել պտղահատապտղային տնկարկների եւ խաղողի այգիների, մրգերի եւ հատապտուղների բերքատվության եւ համախառն բերքի մասին կանխատեսումային տվյալները.

որոշել մրգերի եւ հատապտուղների կանխատեսվող համախառն բերքը (Ս₃) հետեւյալ բանաձեւով՝

$$\Pi_{\phi\pi} = P_{\phi\pi} \times Y_{\phi\pi},$$

որտեղ՝

$P_{\phi\pi}$ -ն պտղահատապտղային տնկարկների եւ խաղողի այգիների պլանավորվող տարածություններն են.

$Y_{\phi\pi}$ -ն՝ մրգերի եւ հատապտուղների կանխատեսվող բերքատվությունը:

Պտղահատապտղային տնկարկների եւ խաղողի այգիների տարածությունների կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

տնկման պլանավորվող տարածությունները.

հողատեսքերի ենթադրվող ձեւափոխումը, այդ թվում՝ խամահողերի հերկման հաշվին.

դիտարկվող ժամանակահատվածում իրականացվող՝ մրգերի եւ հատապտուղների աճեցման զարգացման մասով խոշոր ներդրումային ծրագրերը.

մրգերի եւ հատապտուղների ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան:

Համապատասխան գերատեսչական կանխատեսումների բացակայության դեպքում մրգերի եւ հատապտուղների բերքատվության ցուցանիշները կանխատեսվում են նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների օգնությամբ: Մրգերի եւ հատապտուղների բերքատվության կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում հետեւյալ գործոնները՝

պարարտանյութերի կիրառման պլանավորվող մակարդակը.

տնկանյութերով ապահովվածությունը.

մրգերի եւ հատապտուղների աճեցման ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրումը:

Կանխատեսումային գնահատումների ճշգրտությունը բարձրացնելու նպատակով մրգերի եւ հատապտուղների համախառն բերքի հաշվարկը կարող է կատարվել առանձին՝ ըստ յուրաքանչյուր մշակաբույսի եւ տնտեսության կատեգորիայի (հետագա գումարմամբ)՝ գյուղատնտեսական կազմակերպություններում, գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում եւ բնակչության տնտեսություններում:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

3. Ներսերում՝ ընդամենը

այդ թվում՝

փոխադարձ առևտուր՝ ընդամենը

այդ թվում՝ անդամ պետություններից՝

...

արտաքին առևտուր (ներմուծում)

3-րդ դիրքն արտացոլում է մրգերի եւ հատապտուղների, ինչպես նաեւ դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի ներսերման ընդհանուր ծավալը, այդ թվում՝ անդամ պետություններից (փոխադարձ առետուր), եւ մրգերի ու հատապտուղների, ինչպես նաեւ դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի ներմուծման մատակարարումները երրորդ երկրներից (արտաքին առետուր):

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար մրգերի եւ հատապտուղների ներսերման ցուցանիշները (OB_{ֆթ}) որոշվում են հետեւյալ բանաձեւով՝

$$OB_{\text{ֆթ}} = \sum_k B_{\text{ֆթ}k} + I_{\text{ֆթ}},$$

որտեղ՝

B_{ֆթk}-ն k անդամ պետությունից մրգերի եւ հատապտուղների, ինչպես նաեւ դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի ներսերման կանխատեսումն է.

I_{ֆթ}-ն՝ մրգերի եւ հատապտուղների, ինչպես նաեւ դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի ներմուծումը:

Անդամ պետություններից մրգերի ու հատապտուղների, ինչպես նաեւ դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի ներսերման եւ մրգերի ու հատապտուղների, ինչպես նաեւ դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի ներմուծման մատակարարումների կանխատեսումները կարող են որոշվել նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների կիրառմամբ: Տվյալ կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

մրգերի եւ հատապտուղների՝ անդամ պետության կանխատեսվող պահանջմունքները.

մրգերի եւ հատապտուղների ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան՝ ներառյալ ազգային շուկայում եւ մրգերի ու հատապտուղների հիմնական մատակարար պետություններում մրգերի եւ հատապտուղների գների հարաբերակցությունը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

4. Ընդամենը ռեսուրսներ

Մրգերի եւ հատապտուղների, ինչպես նաեւ դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի ռեսուրսային մասով (ռեսուրսների մասով) հանրագումարը ($PeC_{\phi\pi}$) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$PeC_{\phi\pi} = 3H_{\phi\pi} + \Pi_{\phi\pi} + B_{\phi\pi} + I_{\phi\pi},$$

որտեղ՝

$3H_{\phi\pi}$ -ն տարվա սկզբին մրգերի եւ հատապտուղների պաշարներն են.

$\Pi_{\phi\pi}$ -ն՝ մրգերի եւ հատապտուղների արտադրությունը.

$B_{\phi\pi}$ -ն՝ անդամ պետություններից մրգերի եւ հատապտուղների, ինչպես նաեւ դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի ներսւբերումը.

$I_{\phi\pi}$ -ն՝ մրգերի եւ հատապտուղների, ինչպես նաեւ դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի ներմուծումը:

Մրգերի եւ հատապտուղների, ինչպես նաեւ դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի բաշխիչ մասը (ռեսուրսների օգտագործումը) ներառում է հետևյալ դիրքերը՝

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
այդ թվում՝

պարենային նպատակով վերամշակում

կորուստներ

անձնական սպառում

5-րդ դիրքը ներառում է պարենային նպատակով վերամշակման, արտադրական սպառման համար մրգերի եւ հատապտուղների ծախսման մասով տվյալները, կորուստների եւ անձնական սպառման մասով տվյալները:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
այդ թվում՝
կորուստներ

5-րդ դիրքի «կորուստներ» ենթադիրքը ներառում է արտադրությունից մինչև իրացում բոլոր փուլերում մրգերի եւ հատապտուղների կորուստների մասով տվյալները (գյուղատնտեսական արտադրողների, արտադրող ձեռնարկությունների, առևտրի կազմակերպությունների եւ այլ կազմակերպությունների կորուստների մասով):

Կորուստների կանխատեսումը հաշվարկվում է՝ հաշվի առնելով վերջին 3 տարվա համար ռեսուրսներում դրանց միջին տեսակարար կշիռը եւ մրգերի ու հատապտուղների կորուստների կրճատմանն ուղղված՝ անդամ պետությունների պլանավորվող միջոցառումները:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
այդ թվում՝
անձնական սպառում

Անձնական սպառման ֆոնդի կազմը (5-րդ դիրքի «անձնական սպառում» ենթադիրք) ներառում է այն մրգերի եւ հատապտուղների մասով տվյալներ, որոնք տնային տնտեսություններում ստացվում են հում տեսքով, եւ չի ներառում վերամշակված տեսքով սպառվող մրգերի եւ հատապտուղների մասով տվյալները:

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար մրգերի եւ հատապտուղների անձնական սպառման ցուցանիշները կարող են սահմանվել որպէս երեք վերջին 3 տարվա համար միջին արժեք:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվութ յուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատես ում)	տարի (կանխատես ում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

6. Դուրսբերում՝ ընդամենը
այդ թվում՝
փոխադարձ առեւտուր՝ ընդամենը
այդ թվում՝ անդամ պետություններ՝

...
արտաքին առեւտուր (արտահանում)

6-րդ դիրքն արտացոլում է մրգերի եւ հատապտուղների դուրսբերման ընդհանուր ծավալը, այդ թվում՝ անդամ պետություններ (փոխադարձ առեւտուր), եւ մրգերի ու հատապտուղների արտահանման մատակարարումները երրորդ երկրներ (արտաքին առեւտուր):

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար մրգերի ու հատապտուղների դուրսբերման ցուցանիշները ($OBB_{\phi\pi}$) որոշվում են հետեւյալ բանաձեւով՝

$$OBB_{\phi\pi} = \sum_k BB_{\phi\pi k} + \Theta_{\phi\pi},$$

որտեղ՝

$BB_{\phi\pi k}$ -ն k անդամ պետություն մրգերի ու հատապտուղների դուրսբերման կանխատեսումն է.

$\Theta_{\phi\pi}$ -ն՝ մրգերի ու հատապտուղների արտահանումը (արտաքին առեւտուր):

Անդամ պետություններ մրգերի եւ հատապտուղների դուրսբերման եւ մրգերի ու հատապտուղների արտահանման մատակարարումների կանխատեսումները

կարող են որոշվել նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների կիրառմամբ: Տվյալ կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

մրգերի եւ հատապտուղների կանխատեսվող ռեսուրսները եւ դրանց ներքին օգտագործումը.

մրգերի եւ հատապտուղների ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան՝ ներառյալ ազգային շուկայում եւ մրգերի ու հատապտուղների հիմնական սպառող պետություններում մրգերի եւ հատապտուղների գների հարաբերակցությունը.

մրգերի եւ հատապտուղների արտահանմանը վերաբերող՝ անդամ պետությունների օրենսդրության ենթադրվող փոփոխությունները (մաքսատուրքերի չափերի փոփոխություններ, էմբարգոյի սահմանում եւ այլ փոփոխություններ):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

7. Ընդամենը օգտագործում

Մրգերի եւ հատապտուղների պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի բաշխիչ մասով (ռեսուրսների օգտագործման մասով) հանրագումարը ($Исп_{\phi\pi}$) որոշվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Исп_{\phi\pi} = C_{\phi\pi} + ПО_{\phi\pi} + ЛП_{\phi\pi} + ВВ_{\phi\pi} + Э\phi_{\pi},$$

որտեղ՝

$C_{\phi\pi}$ -ն պարենային նպատակով մրգերի եւ հատապտուղների վերամշակումն է.

$ПО_{\phi\pi}$ -ն՝ մրգերի եւ հատապտուղների կորուստները.

$ЛП_{\phi\pi}$ -ն՝ մրգերի եւ հատապտուղների անձնական սպառումը.

BB_{ֆա}-ն՝ անդամ պետություններ մրգերի եւ հատապտուղների դուրսբերումը.

Յ_{ֆա}-ն՝ մրգերի եւ հատապտուղների արտահանումը (արտաքին առևտուր):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

8. Պաշարներ՝ տարվա վերջում

Ց-րդ դիրքը ներառում է գյուղատնտեսական արտադրողների, այլ կազմակերպությունների մրգերի եւ հատապտուղների պաշարների մասով տվյալները:

Տարվա վերջում մրգերի եւ հատապտուղների պաշարների կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում հետեւյալ գործոնները՝

մրգերի եւ հատապտուղների կանխատեսվող ռեսուրսները եւ դրանց ներքին օգտագործումը.

մինչեւ հաջորդ տարվա բերքը մրգերի եւ հատապտուղների պահանջմունքի բավարարման համար մրգերի եւ հատապտուղների անհրաժեշտ պաշարների ձեւավորումը.

մրգերի եւ հատապտուղների ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան՝ ներառյալ ազգային շուկայում եւ մրգերի ու հատապտուղների հիմնական սպառող պետություններում մրգերի եւ հատապտուղների գների հարաբերակցությունը.

պահեստային տնտեսության հզորությունների առկայության եւ զարգացման մասին տվյալները:

XI. Վուշի մանրաթելի մասով կանխատեսվող հաշվեկշիռը

Վուշի մանրաթելի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռն արտացոլում է կանխատեսվող ռեսուրսները՝ ըստ դրա ստացման աղբյուրների եւ օգտագործման ուղղությունների (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 5301 10 000 0, 5301 21 000 0 եւ 5301 29 000 0 ծածկագրեր):

Հաշվետու տարվա համար վուշի մանրաթելի մասով տվյալները հաշվարկվում են անդամ պետությունների պետական վիճակագրական մարմինների (ծառայությունների) կողմից հաստատվող մեթոդիկաներին համապատասխան՝ բացառությամբ «Ներսերում» եւ «Դուրսերում» ցուցանիշների (3-րդ եւ 6-րդ դիրքեր):

Վուշի մանրաթելի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռի ռեսուրսային մասը (ռեսուրսները) ներառում է հետևյալ դիրքերը՝

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

1. Պաշարներ՝ տարվա սկզբին

1-ին դիրքը ներառում է գյուղատնտեսական արտադրողների մոտ (գյուղատնտեսական կազմակերպություններում, գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում եւ բնակչության տնտեսություններում), արտադրող ձեռնարկություններում եւ այլ կազմակերպություններում վուշի մանրաթելի պաշարների մասով տվյալները:

Տարվա սկզբին վուշի մանրաթելի պաշարների մասով տվյալները տեղափոխվում են 8-րդ դիրքից (համապատասխան նախորդ տարվա սյունակից):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

2. Արտադրություն

Վուշի մանրաթելի արտադրության (2-րդ դիրք) տակ հասկացվում է թրջված վշածղնոտի արդյունաբերական վերամշակման արդյունքում վուշի մանրաթելի ստացումը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվության)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-------------------------	-------------------	-----------------------	-----------------------

3. Ներսերում՝ ընդամենը
 այդ թվում՝
 փոխադարձ առևտուր՝ ընդամենը
 այդ թվում՝ անդամ պետություններից՝

 ...
 արտաքին առևտուր (ներմուծում)

3-րդ դիրքն արտացոլում է վուշի մանրաթելի ներսերման ընդհանուր ծավալը, այդ թվում՝ անդամ պետություններից (փոխադարձ առևտուր), եւ վուշի մանրաթելի ներմուծման մատակարարումները երրորդ երկրներից (արտաքին առևտուր):

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար վուշի մանրաթելի ներսերման ցուցանիշները (OB_n) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$OB_n = \sum_k B_{nk} + I_n,$$

որտեղ՝

B_{nk} -ն k անդամ պետությունից վուշի մանրաթելի ներսերման կանխատեսումն է.

I_n -ն՝ վուշի մանրաթելի ներմուծումը (արտաքին առևտուր):

Անդամ պետություններից վուշի մանրաթելի ներսերման եւ վուշի մանրաթելի ներմուծման մատակարարումների կանխատեսումները կարող են որոշվել նախորդ տարիների տվյալների հիման վրա՝ էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների օգնությամբ: Տվյալ կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետևյալ գործոնները՝

անդամ պետության՝ վուշի մանրաթելի կանխատեսվող պահանջմունքները.

վուշի մանրաթելի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան՝ ներառյալ ազգային շուկայում եւ վուշի մանրաթելի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի հիմնական մատակարար պետություններում վուշի մանրաթելի գների հարաբերակցությունը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվո- թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե- սում)	տարի (կանխատե- սում)
---------------------	------------------------------	-------------------	----------------------------	----------------------------

4. Ընդամենը ռեսուրսներ

Վուշի մանրաթելի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի ռեսուրսային մասով (ռեսուրսների մասով) հանրագումարը (Pec_n) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Pec_n = 3H_n + \Pi_n + B_n + I_n,$$

որտեղ՝

$3H_n$ -ն տարվա սկզբին վուշի մանրաթելի պաշարներն են.

Π_n -ն՝ վուշի մանրաթելի արտադրությունը.

B_n -ն՝ անդամ պետություններից վուշի մանրաթելի ներսւբերումը.

I_n -ն՝ վուշի մանրաթելի ներմուծումը (արտաքին առևտուր):

Վուշի մանրաթելի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի բաշխիչ մասը (ռեսուրսների օգտագործումը) ներառում է հետևյալ դիրքերը՝

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվո- թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե- սում)	տարի (կանխատե- սում)
---------------------	------------------------------	-------------------	----------------------------	----------------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը

այդ թվում՝

արտադրական սպառում՝ ընդամենը

կորուստներ

5-րդ դիրքը ներառում է արտադրական սպառման համար վուշի մանրաթելի ծախսման եւ կորուստների մասով տվյալները:

5-րդ դիրքի «արտադրական սպառում» ենթադիրքն արտացոլում է գործած նյութերի արտադրության եւ այլ նպատակով արտադրող ձեռնարկությունների կողմից վերամշակվող վուշի մանրաթելի մասով տվյալները:

Վուշի մանրաթելի վերամշակման ծավալների կանխատեսումը կատարվում է նախորդ տարիների տվյալների հիման վրա՝ էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների օգնությամբ: Տվյալ կանխատեսումային ցուցանիշը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

վերամշակող ձեռնարկությունների հզորությունների առկայությունը եւ ծանրաբեռնվածությունը.

դիտարկվող ժամանակահատվածում նոր վերամշակող ձեռնարկությունների ստեղծման եւ գործող ձեռնարկությունների զարգացման մասով ներդրումային ծրագրերը:

5-րդ դիրքի «կորուստներ» ենթադիրքը ներառում է արտադրությունից մինչեւ իրացում բոլոր փուլերում վուշի մանրաթելի կորուստների մասով տվյալները (գյուղատնտեսական արտադրողների, արտադրող ձեռնարկությունների եւ այլ կազմակերպությունների կորուստների մասով):

Կորուստների կանխատեսումը հաշվարկվում է՝ հաշվի առնելով վերջին 3 տարվա համար ռեսուրսներում դրանց միջին տեսակարար կշիռը եւ վուշի մանրաթելի կորուստների կրճատմանն ուղղված՝ անդամ պետությունների պլանավորվող միջոցառումները:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

6. Դուրսերում՝ ընդամենը
այդ թվում՝
փոխադարձ առևտուր՝ ընդամենը
այդ թվում՝ անդամ պետություններ՝

...
արտաքին առևտուր (արտահանում)

6-րդ դիրքն արտացոլում է վուշի մանրաթելի դուրսերման ընդհանուր ծավալը, այդ թվում՝ անդամ պետություններ (փոխադարձ առևտուր), եւ վուշի մանրաթելի արտահանման մատակարարումները երրորդ երկրներ (արտաքին առևտուր):

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար վուշի մանրաթելի դուրսերման ցուցանիշները (OBB_k) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$OBB_n = \sum_k BB_{nk} + \Theta_n,$$

որտեղ՝

BB_{nk} -ն k անդամ պետություն վուշի մանրաթելի դուրսերման կանխատեսումն է.

Θ_n -ն՝ վուշի մանրաթելի արտահանումը (արտաքին առևտուր):

Անդամ պետություններ վուշի մանրաթելի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի դուրսերման եւ վուշի մանրաթելի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի արտահանման մատակարարումների կանխատեսումները կարող են որոշվել նախորդ տարիների տվյալների հիման վրա՝ էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների կիրառմամբ: Տվյալ կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետևյալ գործոնները՝

անդամ պետությունում վուշի մանրաթելի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի կանխատեսվող ռեսուրսները եւ դրանց ներքին օգտագործումը.

վուշի մանրաթելի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան՝ ներառյալ ազգային շուկայում եւ վուշի մանրաթելի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի հիմնական սպառող պետություններում վուշի մանրաթելի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի գների հարաբերակցությունը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

7. Ընդամենը օգտագործում

Վուշի մանրաթելի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի բաշխիչ մասով (ռեսուրսների օգտագործման մասով) հանրագումարը (Исπ_т) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Исп}_т = \text{ПТ}_т + \text{ПО}_т + \text{ВВ}_т + \text{Э}_т,$$

որտեղ՝

ПТ_т-ն գործվածքների արտադրության եւ այլ նպատակով վուշի մանրաթելի վերամշակումն է.

ПО_т-ն՝ վուշի մանրաթելի կորուստները.

ВВ_т-ն՝ անդամ պետություններ վուշի մանրաթելի դուրսբերումը.

Э_т-ն՝ վուշի մանրաթելի արտահանումը (արտաքին առևտուր):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

8. Պաշարներ՝ տարվա վերջում

8-րդ դիրքը ներառում է գյուղատնտեսական արտադրողների մոտ, արտադրող ձեռնարկություններում եւ այլ կազմակերպություններում վուշի մանրաթելի պաշարների մասով տվյալները:

Տարվա վերջում վուշի մանրաթելի պաշարների կանխատեսումը հաշվարկվում է՝ հաշվի առնելով՝

անդամ պետությունում վուշի մանրաթելի կանխատեսվող ռեսուրսները եւ դրա ներքին օգտագործումը.

մինչեւ հաջորդ տարվա բերքը վուշի մանրաթելի պահանջմունքի բավարարման համար վուշի մանրաթելի անհրաժեշտ պաշարների ձեւավորումը.

անդամ պետությունում վերամշակող ձեռնարկությունների եւ պահեստային տնտեսության հզորությունների առկայության եւ զարգացման մասին տվյալները:

XII. Կաշվի հումքի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռը

Կաշվի հումքի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռն արտացոլում է կանխատեսվող ռեսուրսները՝ ըստ կաշվի հումքի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ստացման աղբյուրների ու օգտագործման ուղղությունների՝ քանակական արտահայտությամբ (հազ. հատ) (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 4101, 4102, 4103 30 000 0, 4104, 4105, 4106 31 000 0, 4106 32 000 0, 4107 ծածկագրեր)՝ ըստ սույն մեթոդաբանության թիվ 4 հավելվածում նշված համապատասխան գործակիցների՝ քանակական արտահայտությամբ խոշոր եղջերավոր անասունների կաշվի վերահաշվարկով:

Հաշվետու տարվա համար տվյալները հաշվարկվում են անդամ պետությունների պետական վիճակագրական մարմինների (ծառայությունների) կողմից հաստատվող մեթոդիկաներին համապատասխան՝ բացառությամբ

«Ներսերում» եւ «Դուրսերում» ցուցանիշների (3-րդ եւ 6-րդ դիրքեր): Տվյալ ցուցանիշները հաշվարկվում են ըստ սույն մեթոդաբանության թիվ 4 հավելվածում նշված համապատասխան գործակիցների:

Կաշվի հումքի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի ռեսուրսային մասը (ռեսուրսները) ներառում է հետեւյալ դիրքերը՝

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

1. Պաշարներ՝ տարվա սկզբին

1-ին դիրքը ներառում է գյուղատնտեսական արտադրողների մոտ (գյուղատնտեսական կազմակերպություններում, գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում եւ բնակչության տնտեսություններում), արդյունաբերական վերամշակող եւ այլ ձեռնարկություններում ու կազմակերպություններում կաշվի հումքի պաշարների մասով տվյալները:

Տարվա սկզբին կաշվի հումքի պաշարների մասով տվյալները տեղափոխվում են 8-րդ դիրքից (համապատասխան նախորդ տարվա սյունակից):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

2. Արտադրություն

Կաշվի հումքի (2-րդ դիրք) արտադրության ծավալում ներառվում է կենդանիների (խոշոր եղջերավոր անասունների, մանր եղջերավոր անասունների եւ խոզերի) կաշվի արտադրությունը բոլոր կատեգորիայի տնտեսություններում՝

գյուղատնտեսական կազմակերպություններում.

գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում.

բնակչության տնտեսություններում:

Կաշվի հումքի արտադրությունը հաշվի է առնվում քանակով՝ վերջնամշակումից հետո:

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար կաշվի հումքի արտադրության ցուցանիշները որոշվում են անդամ պետությունների՝ գյուղատնտեսության զարգացման պետական ծրագրերի եւ անասնաբուծության զարգացման ոլորտային ծրագրերի հետ փոխկապակցված գերատեսչական կանխատեսումներին համապատասխան: Գերատեսչական կանխատեսումները կարող են պարունակել՝

կաշվի հումքի մասով ցուցանիշները առանձին՝ ոչխարների, այծերի, կովերի եւ այլ կենդանիների մասով.

սպանդի համար նախատեսված կենդանիների քանակի մասին կանխատեսումային տվյալներ.

կաշվի հումքի կանխատեսվող արտադրությունը (Π_{KC}), որը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\Pi_{KC} = P_{KPC} + (k_{MPC} \times P_{MPC}) + (k_{CB} \times P_{CB}),$$

որտեղ՝

P_{KPC} -ն սպանդի համար նախատեսված խոշոր եղջերավոր անասունների քանակն է.

P_{MPC} -ն՝ սպանդի համար նախատեսված մանր եղջերավոր անասունների քանակը.

P_{CB} -ն՝ սպանդի համար նախատեսված խոզերի քանակը.

k_{MPC} -ն՝ խոշոր եղջերավոր անասունների կաշվով մանր եղջերավոր անասունների կաշվի վերահաշվարկի գործակիցը (0,5).

k_{CB} -ն խոշոր եղջերավոր անասունների կաշվով վերահաշվարկի գործակիցը (0,75):

Կաշվի հումքի արտադրության կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաև հետևյալ գործոնները՝

անասունների գլխաքանակի ենթադրվող ավելացումը, այդ թվում՝ դրանց ծնածի ավելացման հաշվին.

դիտարկվող ժամանակահատվածում իրականացվող՝ անասնաբուծության զարգացման մասով խոշոր ներդրումային ծրագրերը.

կաշվի հումքի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան:

Համապատասխան գերատեսչական կանխատեսումների բացակայության դեպքում կաշվի հումքի արտադրության ծավալների ցուցանիշները կանխատեսվում են նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների օգնությամբ: Մեկ կենդանուց կաշվի հումքի արտադրության ծավալների կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

անասունների պլանավորվող ծնածը.

կենդանիների առողջական վիճակը.

անասնաբուժական արտադրանքի արտադրության համար ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրումը:

Կանխատեսումային գնահատումների ճշգրտությունը բարձրացնելու նպատակով կաշվի հումքի արտադրության հաշվարկը կարող է կատարվել առանձին՝ ըստ տնտեսության յուրաքանչյուր կատեգորիայի (հետագա գումարմամբ)՝ գյուղատնտեսական կազմակերպություններում, գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում եւ բնակչության տնտեսություններում:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

3. Ներսերում՝ ընդամենը

այդ թվում՝

փոխադարձ առևտուր՝ ընդամենը

այդ թվում՝ անդամ պետություններից՝

...

արտաքին առևտուր (ներմուծում)

3-րդ դիրքն արտացոլում է կաշվի հումքի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներսերման ընդհանուր ծավալը, այդ թվում՝ անդամ պետություններից (փոխադարձ առևտուր), եւ կաշվի հումքի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներմուծման մատակարարումները երրորդ երկրներից (արտաքին առևտուր):

Կանխատեսումային ժամանակահատվածի համար կաշվի հումքի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներսերման ցուցանիշները (OB_{KC}) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$OB_{KC} = \sum_n B_{Kck} + I_{CK},$$

որտեղ՝

B_{Kck} -ն k անդամ պետությունից կաշվի հումքի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներսերման կանխատեսումն է.

I_{CK} -ն՝ կաշվի հումքի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներմուծումը (արտաքին առևտուր):

Անդամ պետություններից կաշվի հումքի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներսերման եւ կաշվի հումքի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներմուծման մատակարարումների կանխատեսումները կարող են

որոշվել նախորդ տարիների տվյալների հիման վրա՝ էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների կիրառմամբ: Տվյալ կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

անդամ պետության՝ կաշվի հումքի կանխատեսվող պահանջմունքները.

կաշվի հումքի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան՝ ներառյալ ազգային շուկայում եւ կաշվի հումքի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի հիմնական մատակարար պետություններում կաշվի հումքի գների հարաբերակցությունը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

4. Ընդամենը ռեսուրսներ

Կաշվի հումքի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի ռեսուրսային մասով (ռեսուրսների մասով) հանրագումարը (Pec_{KC}) որոշվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Pec_{KC} = 3H_{KC} + \Pi_{KC} + B_{KC} + I_{KC},$$

որտեղ՝

$3H_{KC}$ -ն տարվա սկզբին կաշվի հումքի պաշարներն են.

Π_{KC} -ն՝ կաշվի հումքի արտադրությունը.

B_{KC} -ն՝ անդամ պետություններից կաշվի հումքի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներսւբերումը.

I_{KC} -ն՝ կաշվի հումքի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներմուծումը (արտաքին առեւտուր):

Կաշվի հումքի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի բաշխիչ մասը (ռեսուրսների օգտագործումը) ներառում է հետեւյալ դիրքերը՝

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվո- թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե- սում)	տարի (կանխատե- սում)
---------------------	------------------------------	-------------------	----------------------------	----------------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը
այդ թվում՝
արտադրական սպառումը՝
կորուստներ

5-րդ դիրքը ներառում է կաշվի հումքի՝ արտադրական սպառման համար ծախսման մասով տվյալները եւ կորուստների մասով տվյալները:

Կաշվի հումքի արտադրական սպառման ծավալների կանխատեսումը կատարվում է նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների օգնությամբ: Կանխատեսումային ցուցանիշները հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

վերամշակող ձեռնարկությունների հզորությունների առկայությունը եւ ծանրաբեռնվածությունը.

դիտարկվող ժամանակահատվածում նոր վերամշակող ձեռնարկությունների ստեղծման եւ գործող վերամշակող ձեռնարկությունների զարգացման մասով ներդրումային ծրագրերը:

5-րդ դիրքի «կորուստներ» ենթադիրքը ներառում է արտադրությունից մինչեւ իրացում բոլոր փուլերում կաշվի հումքի կորուստների մասով տվյալները (գյուղատնտեսական արտադրողների, արտադրող ձեռնարկությունների, մեծածախ առեւտրի կազմակերպությունների եւ այլ կազմակերպությունների կորուստների մասով):

Կորուստների կանխատեսումը հաշվարկվում է՝ հաշվի առնելով վերջին 3 տարվա համար ռեսուրսներում դրանց միջին տեսակարար կշիռը եւ կաշվի հումքի կորուստների կրճատմանն ուղղված՝ անդամ պետությունների պլանավորվող միջոցառումները:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվության թիվ)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	--------------------------------	-------------------	-----------------------	-----------------------

6. Դուրսբերում՝ ընդամենը,
այդ թվում՝
փոխադարձ առևտուր՝ ընդամենը
այդ թվում՝ անդամ պետություններ՝

...
արտաքին առևտուր (արտահանում)

6-րդ դիրքն արտացոլում է կաշվի հումքի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի դուրսբերման ընդհանուր ծավալը, այդ թվում՝ անդամ պետություններ (փոխադարձ առևտուր), եւ հումքի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի արտահանման մատակարարումները երրորդ երկրներ (արտաքին առևտուր):

Կանխատեսումային ժամանակահատվածի համար կաշվի հումքի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի դուրսբերման ցուցանիշները (OBB₃) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$OBB_{\text{Kc}} = \sum_k BB_{\text{Kck}} + \Delta_{\text{Kc}},$$

որտեղ՝

BB_{Kck} -ն k անդամ պետություն կաշվի հումքի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի դուրսբերման կանխատեսումն է.

Δ_{Kc} -ն՝ կաշվի հումքի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի արտահանումը (արտաքին առևտուր):

Անդամ պետություններ կաշվի հումքի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի դուրսբերման եւ կաշվի հումքի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի արտահանման մատակարարումների կանխատեսումները կարող են

որոշվել նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների կիրառմամբ: Տվյալ կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

կաշվի հումքի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի կանխատեսվող ռեսուրսները եւ դրանց ներքին օգտագործումը.

կաշվի հումքի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան՝ ներառյալ ազգային շուկայում եւ կաշվի հումքի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի հիմնական սպառող պետություններում կաշվի հումքի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի գների հարաբերակցությունը.

կաշվի հումքի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի արտահանմանը վերաբերող՝ անդամ պետությունների օրենսդրության ենթադրվող փոփոխությունները (մաքսատուրքերի չափերի փոփոխություններ, էմբարգոյի սահմանում եւ այլ փոփոխություններ):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

7. Ընդամենը օգտագործում

Կաշվի հումքի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի բաշխիչ մասով (ռեսուրսների օգտագործման մասով) հանրագումարը ($ИСП_{кк}$) որոշվում է հետեւյալ բանաձեւով՝

$$ИСП_{кк} = C_{кк} + ПО_{кк} + ВВ_{кк} + Э_{кк},$$

որտեղ՝

$C_{кк}$ -ն արտադրական սպառումն է.

$ПО_{кк}$ -ն՝ կաշվի հումքի կորուստները.

BB_{KC}-ն՝ անդամ պետություններ կաշվի հումքի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի դուրսբերումը.

Ճ_{KC}-ն՝ կաշվի հումքի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի արտահանումը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

8. Պաշարներ՝ տարվա վերջում

8-րդ դիրքը ներառում է գյուղատնտեսական արտադրողների եւ այլ կազմակերպությունների կաշվի հումքի պաշարների մասով տվյալները:

Տարվա վերջում կաշվի հումքի պաշարների կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում հետեւյալ գործոնները՝

կաշվի հումքի կանխատեսվող ռեսուրսները եւ դրանց ներքին օգտագործումը.

մինչեւ հաջորդ տարվա մթերումը կաշվի հումքի պահանջմունքի բավարարման համար կաշվի հումքի անհրաժեշտ պաշարների ձեւավորումը.

կաշվի հումքի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան՝ ներառյալ ազգային շուկայում եւ կաշվի հումքի հիմնական սպառող պետություններում կաշվի հումքի գների հարաբերակցությունը.

վերամշակող ձեռնարկությունների եւ պահեստային տնտեսության հզորությունների առկայության եւ զարգացման մասին տվյալները:

XIII. Բամբակի մանրաթելի ու դրա վերամշակումից ստացվող
արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի
կանխատեսումային հաշվեկշիռը

Բամբակի մանրաթելի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռն արտացոլում է կանխատեսվող ռեսուրսները՝ ըստ Բամբակի մանրաթելի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ստացման աղբյուրների ու օգտագործման ուղղությունների (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 5201 00, 5202, 5203 00 000 0 ծածկագրեր), ըստ սույն մեթոդաբանության թիվ 4 հավելվածում նշված համապատասխան գործակիցների՝ վերջնամշակումից հետո քաշով բամբակի մանրաթելի վերահաշվարկով:

Հաշվետու տարվա համար տվյալները հաշվարկվում են անդամ պետությունների պետական վիճակագրական մարմինների (ծառայությունների) կողմից հաստատվող մեթոդիկաներին համապատասխան՝ բացառությամբ «Ներսբերում» եւ «Դուրսբերում» ցուցանիշների (3-րդ եւ 6-րդ դիրքեր): Տվյալ ցուցանիշները հաշվարկվում են ըստ սույն մեթոդաբանության 4-րդ հավելվածում նշված համապատասխան գործակիցների:

Բամբակի մանրաթելի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի ռեսուրսային մասը (ռեսուրսները) ներառում է հետևյալ դիրքերը՝

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվո- թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե- սում)	տարի (կանխատե- սում)
---------------------	------------------------------	-------------------	----------------------------	----------------------------

1. Պաշարներ՝ տարվա սկզբին

1-ին դիրքը ներառում է բամբակի մանրաթելի սեփականատերերի մոտ, թեթեւ արդյունաբերության ձեռնարկություններում եւ այլ կազմակերպություններում բամբակի մանրաթելի պաշարների մասով տվյալները:

Տարվա սկզբին բամբակի մանրաթելի պաշարների մասով տվյալները տեղափոխվում են 8-րդ դիրքից (համապատասխան նախորդ տարվա սյունակից):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	--------------------------	-------------------	-----------------------	-----------------------

2. Արտադրություն

Բամբակի մանրաթելի արտադրության ծավալում (2-րդ դիրք) ներառվում է բամբակի մանրաթելի վերահաշվարկով՝ հում բամբակի համախառն բերքը բոլոր կատեգորիաների տնտեսություններում՝

գյուղատնտեսական կազմակերպություններում.

գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում.

բնակչության տնտեսություններում:

Բամբակի մանրաթելի համախառն բերքը հաշվի է առնվում քաշով՝ վերջնամշակումից հետո:

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար բամբակի մանրաթելի համախառն բերքի ցուցանիշները որոշվում են անդամ պետությունների՝ գյուղատնտեսության զարգացման պետական ծրագրերի եւ բուսաբուծության զարգացման ոլորտային ծրագրերի հետ փոխկապակցված գերատեսչական կանխատեսումներին համապատասխան: Գերատեսչական կանխատեսումները կարող են պարունակել՝

բամբակաբույսի ցանքատարածությունների մասին, բամբակի մանրաթելի վերահաշվարկով հում բամբակի բերքատվության եւ համախառն բերքի մասին կանխատեսումային տվյալները.

բամբակի մանրաթելի կանխատեսվող համախառն բերքը (Π_x), որը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\Pi_x = P_x \times Y_x,$$

որտեղ՝

Px-ն բամբակաբույսի պլանավորվող ցանքատարածությունն է.

Yx-ն՝ բամբակաբույսի կանխատեսվող բերքատվությունը (բամբակի մանրաթելի վերահաշվարկով):

Բամբակաբույսի ցանքատարածությունների կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաև հետևյալ գործոնները՝

գյուղատնտեսական մշակաբույսերի պլանավորվող ցանքաշրջանառությունը.

ռոտզվող հողերը շրջանառության մեջ մտցնելու համար ենթադրվող տարածությունները.

դիտարկվող ժամանակահատվածում իրականացվող՝ բամբակի մանրաթելի արտադրության զարգացման մասով խոշոր ներդրումային ծրագրերը.

բամբակի մանրաթելի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան:

Համապատասխան գերատեսչական կանխատեսումների բացակայության դեպքում բամբակաբույսի բերքատվության ցուցանիշները կանխատեսվում են նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների օգնությամբ: Բամբակաբույսի բերքատվության կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաև հետևյալ գործոնները՝

պարարտանյութերի կիրառման պլանավորվող մակարդակը. սերմերի որակը.

բուսաբուծության արտադրանքի աճեցման ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրումը:

Կանխատեսումային գնահատումների ճշգրտությունը բարձրացնելու նպատակով բամբակի մանրաթելի համախառն բերքի հաշվարկը կարող է կատարվել առանձին՝ ըստ բամբակի մանրաթելի յուրաքանչյուր սեփականատիրոջ (հետագա գումարմամբ):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

3. Ներսերում՝ ընդամենը
այդ թվում՝
փոխադարձ առևտուր՝ ընդամենը
այդ թվում՝ անդամ պետություններից՝

...
արտաքին առևտուր (ներմուծում)

3-րդ դիրքն արտացոլում է բամբակի մանրաթելի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներսերման ընդհանուր ծավալը, այդ թվում՝ անդամ պետություններից (փոխադարձ առևտուր), եւ բամբակի մանրաթելի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներմուծման մատակարարումները երրորդ երկրներից (արտաքին առևտուր):

Կանխատեսումային ժամանակահատվածի համար բամբակի մանրաթելի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներսերման ցուցանիշները (OB_x) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$OB_x = \sum_k B_{xk} + I_x,$$

որտեղ՝

B_{xk}-ն k անդամ պետությունից բամբակի մանրաթելի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներսերման կանխատեսումն է.

I_x-ն՝ բամբակի մանրաթելի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներմուծումը (արտաքին առևտուր):

Անդամ պետություններից բամբակի մանրաթելի ներսերման եւ բամբակի մանրաթելի ներմուծման մատակարարումների կանխատեսումները կարող են որոշվել նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների կիրառմամբ: Տվյալ կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետևյալ գործոնները՝

անդամ պետության՝ բամբակի մանրաթելի կանխատեսվող պահանջմունքները.

բամբակի մանրաթելի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան՝ ներառյալ ազգային շուկայում եւ բամբակի մանրաթելի հիմնական մատակարար պետություններում բամբակի մանրաթելի գների հարաբերակցությունը:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

4. Ընդամենը ռեսուրսներ

Բամբակի մանրաթելի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի ռեսուրսային մասով (ռեսուրսների մասով) հանրագումարը (Pec_x) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Pec_x = 3H_x + \Pi_x + B_x + I_x,$$

որտեղ՝

$3H_x$ -ն տարվա սկզբին բամբակի մանրաթելի պաշարներն են.

Π_x -ն՝ բամբակի մանրաթելի արտադրությունը.

B_x -ն՝ անդամ պետություններից բամբակի մանրաթելի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներսերումը.

I_x -ն՝ բամբակի մանրաթելի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներմուծումը (արտաքին առևտուր):

Բամբակի մանրաթելի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռների բաշխիչ մասը (ռեսուրսների օգտագործումը) ներառում է հետևյալ դիրքերը՝

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

5. Ներքին օգտագործում՝ ընդամենը այդ թվում՝
արտադրական սպառում
կորուստներ

5-րդ դիրքը ներառում է բամբակի մանրաթելի՝ արտադրական սպառման համար ծախսման մասով տվյալները եւ կորուստների մասով տվյալները:

Արտադրական կարիքների համար բամբակի մանրաթելի վերամշակման ծավալների կանխատեսումը կատարվում է նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների օգնությամբ: Կանխատեսումային ցուցանիշները հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

վերամշակող ձեռնարկությունների հզորությունների առկայությունը եւ ծանրաբեռնվածությունը.

դիտարկվող ժամանակահատվածում նոր վերամշակող ձեռնարկությունների ստեղծման եւ գործող ձեռնարկությունների զարգացման մասով ներդրումային ծրագրերը:

5-րդ դիրքի «կորուստներ» ենթադիրքը ներառում է արտադրությունից մինչեւ իրացում բոլոր փուլերում բամբակի մանրաթելի կորուստների մասով տվյալները:

Կորուստների կանխատեսումը հաշվարկվում է՝ հաշվի առնելով վերջին 3 տարվա համար ռեսուրսներում դրանց միջին տեսակարար կշիռը եւ բամբակի մանրաթելի կորուստների կրճատմանն ուղղված՝ անդամ պետությունների պլանավորվող միջոցառումները:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

6. Դուրսբերում՝ ընդամենը,
այդ թվում՝
փոխադարձ առևտուր՝ ընդամենը
այդ թվում՝ անդամ պետություններ՝

...
արտաքին առևտուր (արտահանում)

6-րդ դիրքն արտացոլում է բամբակի մանրաթելի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի դուրսբերման ընդհանուր ծավալը, այդ թվում՝ անդամ պետություններ (փոխադարձ առևտուր), եւ բամբակի մանրաթելի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի արտահանման մատակարարումները երրորդ երկրներ (արտաքին առևտուր):

Կանխատեսումային ժամանակահատվածի համար բամբակի մանրաթելի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի դուրսբերման ցուցանիշները (OBB_x) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$OBB_x = \sum_k BB_{xk} + \Theta_x,$$

որտեղ՝

BB_{xk} -ն k անդամ պետություն բամբակի մանրաթելի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի դուրսբերման կանխատեսումն է.

Θ_x -ն՝ բամբակի մանրաթելի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի արտահանումը (արտաքին առևտուր):

Անդամ պետություններ բամբակի մանրաթելի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի դուրսբերման եւ բամբակի մանրաթելի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի արտահանման մատակարարումների կանխատեսումները կարող են որոշվել նախորդ տարիների տվյալների հիման վրա

էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների կիրառմամբ: Տվյալ կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

բամբակի մանրաթելի կանխատեսվող ռեսուրսները եւ դրանց ներքին օգտագործումը.

բամբակի մանրաթելի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան՝ ներառյալ ազգային շուկայում եւ բամբակի մանրաթելի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի հիմնական սպառող պետություններում բամբակի մանրաթելի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի գների հարաբերակցությունը.

բամբակի մանրաթելի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի արտահանմանը վերաբերող՝ անդամ պետությունների օրենսդրության ենթադրվող փոփոխությունները (մաքսատուրքերի չափերի փոփոխություններ, էմբարգոյի սահմանում եւ այլ փոփոխություններ):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

7. Ընդամենը օգտագործում

Բամբակի մանրաթելի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի բաշխիչ մասով (ռեսուրսների օգտագործման մասով) հանրագումարը (ИСП_x) որոշվում է հետեւյալ բանաձեւով՝

$$\text{ИСП}_x = K_x + \text{ПО}_x + \text{ВВ}_x + \text{Э}_x,$$

որտեղ՝

K_x -ն բամբակի մանրաթելի արտադրական սպառումն է.

ПО_x -ն՝ բամբակի մանրաթելի կորուստները.

BBx-ն՝ անդամ պետություններ բամբակի մանրաթելի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի դուրսբերումը.

Ճx-ն՝ բամբակի մանրաթելի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի արտահանումը (արտաքին առևտուր):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	-----------------------	----------------	--------------------	--------------------

8. Պաշարներ՝ տարվա վերջում

8-րդ դիրքը ներառում է բամբակի մանրաթելի սեփականատերերի մոտ, թեթեւ արդյունաբերության ձեռնարկություններում եւ այլ կազմակերպություններում բամբակի մանրաթելի պաշարների մասով տվյալները:

Տարվա վերջում բամբակի մանրաթելի պաշարների կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում հետեւյալ գործոնները՝

բամբակի մանրաթելի կանխատեսվող ռեսուրսները եւ դրանց ներքին օգտագործումը.

վերամշակող ձեռնարկությունների՝ բամբակի մանրաթելի պահանջմունքների բավարարման համար բամբակի մանրաթելի անհրաժեշտ պաշարների ձեւավորումը.

բամբակի մանրաթելի ազգային եւ համաշխարհային շուկաների կոնյունկտուրան՝ ներառյալ ազգային շուկայում եւ բամբակի մանրաթելի հիմնական սպառող պետություններում բամբակի մանրաթելի գների հարաբերակցությունը.

վերամշակող ձեռնարկությունների եւ պահեստային տնտեսության հզորությունների առկայության եւ զարգացման մասին տվյալները:

XIV. Բրդի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռը

Բրդի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշիռն արտացոլում է կանխատեսվող ռեսուրսները՝ ըստ բրդի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ստացման աղբյուրների ու օգտագործման ուղղությունների (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 5101 - 5103, 5104 00 000 0, 5105 ծածկագրեր)՝ ըստ սույն մեթոդաբանության թիվ 4 հավելվածում նշված համապատասխան գործակիցների՝ բրդի՝ վերջնամշակումից հետո քաշով վերահաշվարկով:

Հաշվետու տարվա համար տվյալները հաշվարկվում են անդամ պետությունների պետական վիճակագրական մարմինների (ծառայությունների) կողմից հաստատվող մեթոդիկաներին համապատասխան՝ բացառությամբ «Ներսբերում» եւ «Դուրսբերում» ցուցանիշների (3-րդ եւ 6-րդ դիրքեր): Տվյալ ցուցանիշները հաշվարկվում են ըստ սույն մեթոդաբանության թիվ 4 հավելվածում նշված համապատասխան գործակիցների:

Բրդի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումային հաշվեկշռի ռեսուրսային մասը (ռեսուրսները) ներառում է հետևյալ դիրքերը՝

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

1. Պաշարներ՝ տարվա սկզբին

1-ին դիրքը ներառում է գյուղատնտեսական արտադրողների մոտ (գյուղատնտեսական կազմակերպություններում, գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում եւ բնակչության տնտեսություններում), արտադրող ձեռնարկություններում եւ այլ կազմակերպություններում բրդի պաշարների մասով տվյալները:

Տարվա սկզբին բրդի պաշարների մասով տվյալները տեղափոխվում են 8-րդ դիրքից (համապատասխան նախորդ տարվա սյունակից):

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվություն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատեսում)	տարի (կանխատեսում)
---------------------	--------------------------	-------------------	-----------------------	-----------------------

2. Արտադրություն

Բրդի արտադրության ծավալում (2-րդ դիրք) ներառվում է կենդանիների (ոչխարների, այծերի, ուղտերի եւ այլն) բրդի արտադրությունը բոլոր կատեգորիայի տնտեսություններում՝

գյուղատնտեսական կազմակերպություններում.

գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում.

բնակչության տնտեսություններում:

Բրդի արտադրությունը հաշվի է առնվում վերջնամշակումից հետո քաշով:

Ընթացիկ տարվա եւ 2 կանխատեսումային տարիների համար բրդի արտադրության ցուցանիշները որոշվում են անդամ պետությունների՝ գյուղատնտեսության զարգացման պետական ծրագրերի եւ անասնաբուծության զարգացման ոլորտային ծրագրերի հետ փոխկապակցված գերատեսչական կանխատեսումներին համապատասխան: Գերատեսչական կանխատեսումները կարող են պարունակել՝

բրդի արտադրության ցուցանիշներ առանձին՝ ըստ ոչխարի բրդի, այծի բրդի, ուղտի բրդի եւ այլն.

կանխատեսումային տվյալներ բրդի ստացման համար նախատեսվող կենդանիների քանակի, մեկ կենդանուց բրդի քանակի մասին.

բրդի կանխատեսվող արտադրությունը (Մ_բ), որը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\Pi_m = \sum_n (P_{mn} \times Y_{mn}),$$

որտեղ՝

P_{mn} -ն բուրդ խուզելու համար նախատեսված n տեսակի կենդանիների պլանավորվող քանակն է.

Y_{mn} -ն՝ n տեսակի մեկ կենդանուց բրդի պլանավորվող քանակը:

Բրդի քանակի կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաև հետևյալ գործոնները՝

բուրդ ստանալու համար նախատեսվող կենդանիների պլանավորվող քանակը.

անասունների գլխաքանակի ենթադրվող ավելացումը, այդ թվում՝ դրանց ծնածի ավելացման հաշվին.

դիտարկվող ժամանակահատվածում իրականացվող՝ բրդի արտադրության զարգացման մասով խոշոր ներդրումային ծրագրերը.

բրդի ազգային և համաշխարհային շուկաների կոնյունկտուրան:

Համապատասխան գերատեսչական կանխատեսումների բացակայության դեպքում մեկ կենդանուց բուրդ խուզելու ցուցանիշները կանխատեսվում են նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների օգնությամբ: Մեկ կենդանուց բրդի ծավալի կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաև հետևյալ գործոնները՝

անասունների պլանավորվող ծնածը.

կենդանիների առողջական վիճակը.

անասնաբուժական արտադրանքի արտադրության համար ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրումը:

Կանխատեսումային գնահատումների ճշգրտությունը բարձրացնելու նպատակով բրդի արտադրության հաշվարկը կարող է կատարվել առանձին՝ ըստ

տնտեսության յուրաքանչյուր կատեգորիայի (հետագա գումարմամբ)՝ գյուղատնտեսական կազմակերպություններում, գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում եւ բնակչության տնտեսություններում:

Ցուցանիշի անվանումը	տարի (հաշվետվու թյուն)	տարի (ընթացիկ)	տարի (կանխատե սում)	տարի (կանխատե սում)
---------------------	------------------------------	-------------------	---------------------------	---------------------------

3. Ներսերում՝ ընդամենը
 այդ թվում՝
 փոխադարձ առևտուր՝ ընդամենը
 այդ թվում՝ անդամ պետություններից՝

 ...
 արտաքին առևտուր (ներմուծում)

3-րդ դիրքն արտացոլում է բրդի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներսերման ընդհանուր ծավալը, այդ թվում՝ անդամ պետություններից (փոխադարձ առևտուր), եւ բրդի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներմուծման մատակարարումները երրորդ երկրներից (արտաքին առևտուր):

Կանխատեսումային ժամանակահատվածի համար բրդի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներսերման ցուցանիշները (OB_m) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$OB_m = \sum_k B_{mk} + I_m,$$

որտեղ՝

B_{mk} -ն k անդամ պետությունից բրդի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներսերման կանխատեսումն է.

I_m -ն՝ բրդի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներմուծումը (արտաքին առևտուր):

Անդամ պետություններից բրդի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներսերման եւ բրդի ու դրա վերամշակումից ստացվող արտադրանքի ներմուծման մատակարարումների կանխատեսումները կարող են որոշվել նախորդ տարիների տվյալների հիման վրա էքստրապոլյացիայի մեթոդների եւ փորձագիտական մեթոդների կիրառմամբ: Տվյալ կանխատեսումը հաշվարկելիս հաշվի են առնվում նաեւ հետեւյալ գործոնները՝

անդամ պետության՝ բրդի եւ դրա վերամշակումից ստացվող արտադրանքի կանխատեսվող պահանջմունքները.

